Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14341

Սիրելիներս կարդա
1907թ.

891.99-192
Ա-91

4341

Գրքեր.
Գ.Հ.Ա. IV.1.203
Հմ-1554

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՓԱՐ-ՀԱՅ ԵՒ ԸՆԿ.

ԱՐԻԻՆԻ ԵՐԳԸ

Ա՜խ, իմ սիրտս, դարդոտ սիրտս հարուտ է
Նէիրական հայրենիքիս կարօտ է . . .

ԳԻՆԸ 50 ԿՕՊ.

ԵՐԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ „ԼՈՅՍ“ ԱՐՇ. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ.
1907 թ.

Арм.
3-2725а
19 NOV 2011
Ан-1554
891.99-192
Ա-91
3-2725а

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՓԱՐ-ՀԱՏ ԵՒ ԸՆԿ.

ԱՐԻՒՆԻ ԵՐԳԸ

Ա՜խ, իմ սիրտս, դարդոտ սիրտս եարոտ է
Նէիրական հայրենիքիս կարօտ է . . .

Հաշ. № 21194

ԵՐԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ „ԼՈՅՍ“ ԱՐՇ. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ.
1907 թ.

26.02.2013
Ֆ2.Ֆ86

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՕՇԱԿԻ ՏԱԿ

ԲՈԼՈՐ ԸՆԿԱԾ ՀԱՑԴՈՒԿ-ՓԻԴԱՑԻՆԵՐԻ

ԱՆՅԱՅՑ ԾԻՐԻՄՆԵՐԻ

ՍՐԲԱԶԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ։

Հայկական ՍՍՀ Գոս. Գրադարան
ՀԱՅԿ-ԱՍՍՀ ԳՍՀ
Մ. Մաշտոցի անվան Ձեռագրերի ինստիտուտ
(1501-63)
1424-2002

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Հայի սիրտը միշտ սև է եղել, հոգին խոցոտած, օրը խաւար՝ երգը դարդոտ . . .

Սարկական անարգ լուծը շինքին, տառապանքի ծանր բեռը շալակին, նա շարունակ կարօտել է ուրախ, կարմիր օրերի:

Վիշտն ու թախիծը, ցաւն ու տանջանքը, լաւ օր տեսնելու անիծեալ յոյսը—նրա մշտական, նրա անբաժան ընկերն է եղել դարեր շարունակ: Իսկ այն զուլումը—ինչոր հայը տեսաւ ու տարաւ վերջին տարիների արիւնոտ օրերում՝ կարծէք եկաւ մեր սև պատմութեան պակաս էջը լրացնելու:

Իր ծով—դարդերը, քրքրուած հոգու վրա ծանրացած իր հսկայական թախիծը՝ անգութ, անարդար աշխարհի առաջ փռելու համար, հայ ժողովուրդը աշուղ դարձաւ ու երգեց պարզ, անպաճոյճ՝ եթէ կուզէք նաև մի քիչ գռեհիկ ձևով արտայայտուած իր „ԱՐԻՒՆԻ ԵՐԳԸ“... Աղատութեան ճանապարհին՝ աշխարհիս մէջ ամենաթանկագինը-կեանքը աղգին, գաղտփարին նուէր բերող ֆիդայիների, ինքնապաշտպանութեան ծանր, փորձութեան օրերում՝ հայի գոյութեան, նրա «լինել—չը լինելու‘‘ խնդիրը կրծքով պաշտպանողների—«ՀԱՅ ՅԵՂ. ԴԱԾՆԱԿՑՈՒԹԵԱՆ» դրօշակի տակ մարտնչող այդ անզուգական հերոսների կատարած գործերն է, որ այժմ, մի առանձին ոգևորութեամբ երգում է հաղար ու մի վարիանտներով մեր ժողովուրդը և էլեկտրականացնում նրա ամենալայն խաւերը:

Մեր նպատակն էր,—բուն ժողովրդական բանահիւսութեան այդ հում, անմշակ նիւթերը, որոնց մէջ սակաւ չեն նաև զուտ բանաստեղծական ուժգին շեշտն ընդգրկող կտորներ, ամփոփել մի ժողովածուի մէջ և առաջարկել նոյն իրեն ժողովրդին: Գիտակցում ենք, որ մեր ժողովածուի մէջ կան, անշուշտ, ուժեղների հետ նաև թոյլ, գեղարուեստականութիւնից զուրկ կտորներ ևս, որոնք իրը ժողովրդականացած երգեր, չուզեցանք դուրսը թողնել:

Մեր աղբիւրներն են—մեր յայտնի բանաստեղծների գրուածները և ժողովրդի մէջ ընդհանրացած լէ-լէներն ու երգերը՝ որոնցից մի քանիսը—եթէ չենք սխալւում, ոչ մի տեղ տպագրուած չեն:

ՓԱՐ-ՀԱՏ.

ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Դու անցար, հերո՛ս, ղէհ հանգիստ քեզ քուն.
Դու լուսադէմին մեռար լիայոյս,
Դու ճամբորդ էիր դէպ ազատութիւն,
Երբ դեռ հեռու էր, հեռու՝ արշալոյս։

Տես ի՜նչ հերոսներ՝ երգովդ ստեղծուած՝
Փակեցին աչքերդ, որ հանգիստ առնուս.
Հերոսների մէ՛ջ դու մեռար, հերո՛ս,
Մարմնով դառար հոգ, հոգով՝ արշալոյս։

Էրնէ՛կ քո յոյսին, նա՛, որ չէր դողում,
Երբ թոյլ տնքում էր մեր ճահիճն անյոյս.
Այն օձերը էին և գորտերը սողում,
Քանզի գալու էր անշուշտ արշալոյս...

Սակայն երբ ազգդ թմբկով ու փողով
Դէպ ազատութիւն երթայ սրտայոյզ,
Դու կգաս այնտեղ յաղթութեան շողով.
Բայց ննջիր...դեռ կայ մինչև արշալոյս...

ՀՈՒՐԻՆ.

ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Նրա մահուան երկրորդ տարեդարձին.

Քո հոկայական կրծքի մէջ հզօր,
Դու կրում էիր վիշտը մի ազգի
Որ քարշ էր տալիս իր կեանքը բոլոր
Արիւն—արցունքով, տանջանքներով լի։

Դարեր շարունակ լալկան—ազերսող
Մեր նոր սերունդը դարձաւ բողոքող,
Քո Աստուածային վեհ ներշնչումով.
Բողոքի ճամբան բռնեց անվրդով։

Վառ ապագայի արեւածագին
Մի ամբողջ սերունդ կրդայ քեզ ուխտի,
Ննջիր դու հանգիստ, մեծ ընկեր անդին.
Յարգանք անմոռաց քո յիշատակին։

ԴԱՐ-ՀԱՏ.

ՄԵՐ ԱՐՇԱԼՈՅՍԸ

Արեան ծովէն, Մոխրի դաշտէն վայրօրէն
Հնադարեան ուխտաւորի մը նման՝
Խոր հաւատքով Արեւմուտքի կողմերէն
Կըսպասէինք Արշալուսի մեր ծագման։

Արեւմուտքը Ծիածաններ մերթ կապեց,
Որ վիրակապ չ'եղան սակայն մեր վէրքին,
Եւ մերթ մռայլ ամպրոպներով ծածկուեց
Ու շանթերով ակօսեց մեր որբ հոգին։

Կոչնակներու Պաղատանքին համընթաց
Մեր լացն, աղօթք կրկնուեցան դարեդար.
Կամ թէ չկար Աստուած, կամ կար չգթաց,
Ու մենք Մահին սպասեցինք հոգեվար։

Սակայն ահա Արդարութեան Յովազները
Իրաւունքի ճամբաները կ'արօրեն...
Մեզ Արշալոյս, Մաքառումի եղբայրներ,
Արեւելքէն պիտի ծագէ շուտ օրէն։

Վ.ՏԱՐՍԱԴԻ

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ (1897)

(Նէր Սալմաստի Դաշնակցական Հայդուկներին)

Կարկուտ տեղաց Խանասորի դաշտումը,
Ֆիդային էր դաշնակցական վրէժ լուծում հովտումը։

Սոսկաց քիւրդը՝, քնաթաթախ Մարզիկցին,
Չէր երազում ջնջել իսլաո Ֆիդայուցը լուսբացին։

—Եամա՝ն, Աստուած, Ֆիդան եկաւ, ուր փախչենք.
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին։

—Մի վախենար, հանդիստ կեցիր, բաջի ջան,
Կանանց երբէ՛ք ձեռք տալու չէ վրէժխնդիր քաջ Ֆիդան։

Մի ժամայ մէջ Մարզիկ ցեղը ջնջեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկուեցաւ...

Ուխտադրուժ Արաուլը բարձունքից,
Ժպիտերես ողջունումէ օրայ հերոս Հայերուն։

Փչիր շեփոր, դէպ Արաուլ մենք թռչենք,
Դիրքեր բռնենք, գաթա, հալւայ ձիւնի ջրով ճաշակենք...

Մերթ կուում է, մերթ երգում է քաջ Ֆիդան,
Եզակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան։

Չկար Կարօն. տխուր պատեց ամենքին,
Երանի է նրա հոգուն, նահատակուեց այս կուում։

Քեզ ենք յանձնում, ով պաշտելի Արաուլ,
Մեր զոհերը ամուր պահիր գրկիդ մէջը խնկելի։

Կը գայ շուտով շղթան կոտրած հայ մարդը,
Մասունքներիդ համբոյր կտայ, կը խոնարհուի ողջ ազգը։

Հայեր, յիշէք նուիրական այս օրը,
Յուլիս ամսի քսան հինգին կատարեցէք մեր տօնը։

ԹՈՐՈՍ.

Մ'Ի ՎՀԱՏԻՐ...

Մի վհատիր, յոգնած ընկեր, ոտքի ել,
Առաջ թռիր խիզախ ոգով անարգել.
Թող հաւատով լցի սիրտդ այրական.
Թող սթափուին վառ յոյսերդ առնական։

Ինչու տրտում հեռու քաշւենք վհատած,
Երբ մենք կեանքի տէր, իշխան ենք որոշած.
Կեանքը մերն է, մենք ենք փոխում անպայման
Առաջ շարժում նրա ընթացքն անսահման։

Մի վհատիր, տես ինչ յամառ եռանդով
Մարդիկ կեանքում աշխատում են լի յուսով.
Յոյսը նրանց կեանքի ոյժ է պարգևում.
Յոյսը նրանց առաջ, առաջ է մղում։

Օ, մի ընկճւիր, տես թէ ինչպէս ամեն ինչ
Ունի և վիշտ և քաղցրութիւն սփոփիչ.
Ցաւն ու վիշտը սուր փշեր են մեր կեանքում.
Առանց փշի վարդ չես գտնիլ աշխարհում։

ԺԻՐԱՑՐ.

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինւոր ենք, առանցի վիճակ
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ.
Պարսկաստանի խորքից եկել խիստ նամակ,
Գնում ենք բարով, կուշանանք տարով,
Արիւն, սուր ու հուր, պատերազմի դաշտ՝ կսպասեն մեզի։

Դուշմանը մեզ տւաւ «ջան ֆիդայ» անուն.
Այդ անւան համաձայն, տեսաւ զօրութիւն.
Մենք չենք ուզեր ազատ կամքի բռնութիւն.
Ուխտել ենք կռւել, այդ սիրով մեռնել.
Համոզւած ենք որ այդպիսով միայն կայ մեզ փրկութիւն։

Ստամբոլը պիտի լինի արեան ծով,
Ամեն կողմից կռիւ կսկսի շուտով,
Դերիկից Բաշկալա, անցնենք հեշտ կերպով,
Աջից Վարդանը, ձախից Իշխանը,
Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ.
Փառք Դաշնակցութեան։

Բաշկալա գաւառում, այն պատերազմին,
Աւելի մեծ սարսափ տիրեց Սուլթանին,
Բաշ Զէյթունը յաղթեց վատ, չար զաղանին.
Ցեցցէ Զէյթունը, խրոխտ Սասունը, Դաշնակցութիւնը,
Հաղթաւոր օրեր, պարծանք հայերուն։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ZMUR-AJK SEP
Հ. Յակ. Մասեանցեան

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Դաշնակցական խումբ, գնանք մենք Սասուն.
Մեր հայ եղբայրներ մեզ են ըսպասում.
Անդրանիկը քաջ իւր ընկերներով,
Կուզէ պատերազմ, կսպասէ զարնան։

Մօտ է գարունը, շուտով կը բացուի,
Հայի խօսքը քաջ՝ շուտով կը լսի,
Հայերն անվախ, հոգով միացած,
Հրացանն ուսերին՝ մերն է «Նոր տարին»...

Խմբապետները հոգով են կանգնած
Ֆիդայու ուժով գնումեն առաջ...
Առաջն է կաղնած Անդրանիկը քաջ,
Գոռում է, կոչում, կուզէ պատերազմ։



ԽԱԲՐԲԵՐ ԿՌՈՒՆԿ

Մարտի քսանին աչքերս պաղաւ
Զնտանի բակից երկինք աչքելով.
Ասի՝ բալքի մի խաբրիկ մը առնիմ.
Կռունկներ կընցնին սօրանց ըռաֆով։

Եարաւ, Տէր Աստուած, ինչ եղան աճապ,
Ի՞նչի կըռընկներ էս տարի չեկան,
Գիշերով գացին, յօր ես չը տեսնիմ.
Թէ ուրիշ ճամբով թողին ու ցնցան...

Ջան, ձէնիդ զուրպան, տեսայ քո ճամբան,
Զ՚Աստուած կը սիրիս, զու զատանց չերթաս,
Էս մեր վերևից ցնցուր քո քարւան.
Քի խարցմունք մ՚ունիմ, ձիյ ջուհապ մի տաս։

Զու բարով եկար, ո՞ր տեղ մնացիր,
Ասա՛ ձիկ, կռունկ, ինչի յանգրցար.
Ջուապ մի տուր ձիյ, աչս սիրտսի պատռաւ,
Դէհ, ասա՛ կռունկ, աճապ ինչ տեսար։

Զուն կը բարձրանաս, ու կը ցածրանաս,
Հարաֆից կուգաս, կերթաս ի հիւսիս

Տարին երկու դիր քո բուն կը դնես.
Նպատ, Անդոք, Սիս, Սիվան ու Մասիս։

Չիկ ընկերներ կան էն սարանց վերէն,
Անապ ինչ կէնին, խապրիկ մի չունիս,
Տեսաը տու զէնոնք, լսիր զէնոնց ձէն,
Ջուապ մի տուր ձիյ, զուրպան քի խոզիս։

Ինչ ումուտներով ճամբաս յելոյ իս,
Ինչ կէր սրտիս մէջ, ու ինչեր դարձաւ,
Յընկերներս յրմէն չորս տեղ կը կուին
Ես մացի գնտան, էս ա իմ դառ ցաւ,

Ընկերներսի ձիյ, ճամբու դրեցին
Թէսլիմ էրէցին տէրով ամանաթ
Գրկուանք մէկ մէկ, պաքեցինք զիրար,
Ուրախ ին յրմէն սաղ ու սալամաթ։

Մկայ չը՞մ գիտեր, սաղ են, թէ մեռան,
Խապար մի չառայ, վիրնէց խարցուցիմ.
Ոտս ձեռս կապեր ին, թալիր ին գնտան,
Կռունկ, քեզնէց զատ խաբրբեր չունիմ։

Դէհ ասա կռունկ, տուր լուր աւետիս,
Հրայրն ու Վահան անապ ինչ եղան,
Ի՞նչ եղաւ Թորգոմ, էն Նէվրուզ, Որսորդ
Դրախտին, Աղբէր, Երկաթ, Թոխմախ, Խան.

Ա՜խ, իմալ ասեմ, ջիկարս կտրտաւ
Ասա, ինչ եղաւ ջէհէլ Մինակոր,
Կռունկ, ջուապ տուր, լեզուտ պապանձաւ,
Յուր ա իմ դարդոտ Ազիզ Քրիստափոր
Էլ որ մէկն ասրմ, ախ, քակուաւ խոզիս։

Մռմուռ մտաւ սիրտս, թուլցաւ իմ ոտներ,
Կռունկ, ջուապ տուր, ասա, ինչ եղան,
Իմ խաբրբներով կտրիչ ընկերներ...

. . . . . .

Կռունկ, ձէն չէտուր, զուր քարվան քաշեց
Թռաւ զատրցաւ, աչքէս կորուսաւ
Կտրեց զիմ ումուտ, իմ բաժին թողեց
Մութ գնտան, գնջիլ, սև դարդ ու սև ցաւ։

Զ. Փ.



ՊԵՏՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գարահիսար լերան կրծքին՝ նա էլ ընկաւ վիրաւոր.
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած՝ չար թշնամու գնդակով։

Ժայռոտ լերան լերկ կատարից վար սլացիր, սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ ու Պետոյին հով արա՛...

Խոցուած սրտից մուգ արիւնը կաթիլ-կաթիլ կրծորայ.
Ա՜խ ջիւանի կեանքն է հոսում ցաւոտ կրծքի լայն վէրքից...

Ժայռոտ լերան լերկ կատարից վար սլացիր, սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ ու Պետոյին հով արա՛...

ԱՒԵՏԻՔ ՄԱԼՕՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Էն արծիւ էր, թռաւ, գնա՛ց
Մեր վրայով, մեր միջով.
Ա՜խ էն մեր սիրտ, մեր ազիզն էր,
Գնաց սարով, սա՛ր դարդով։

Ինոր դարդը, ա՜խ, մեր դարդն էր,
Ու մեր սրտիցն էն գնաց.
Ինոր դարդը խեղճի դարդն էր,
Խեղճի սրտիցն էն գնաց։

Ո՞ւր գնացիր, ո՞ւր գնացիր,
Մենակ-մենակ գնացիր։
Հեռո՛ւ տեղեր, արնոտ տեղեր.
Ոխը սրտիդ, հոգի ջան,
Ընկար մենակ ու անընկեր՝
Դուման դաշտեր, Աւօ ջան։

Ընկերներդ, ա՜խ, քեզ մոռցան,
Կեանքի ճամբով գնացին.
Քո սուրբ սրտի սէրը մոռցան
Գերեզմանդ կորուցին։

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում է.
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ։

Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատած։

Ահա, եղբայր քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի.
Գիշերները ես քուն չ'եղայ,
Արտասուքով լացի։

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնի.
Բայց երանի՜, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհի։

Մ. ԴԱԼԲԱՆԴԵԱՆ.



ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌԻՎԵՆՔ

Մենք պէտք է կռւենք և ոչ լաց լինենք
Ազգի կորուստը զէնքով հետ խլենք.
Այսքան դար լացինք, ով է լսողը,
Մեզ ինչ շահ բերեց արցունքի ծովը։

Այլ ևս չլանք և ոչ լաց լինենք,
Կրրակւած սրտով մեր գործը վարենք.
Անվեհեր քաջին այս է պատկանում—
Միշտ ազատ մեռնել կռւի լայն դաշտում։

Մոլի և երկչոտ տաճիկը թող լայ,
Երբ հայ քաջի դէմ կռիւ դուրս կուգայ.
Մենք վախեցող չենք մահից տանջանքից,
Եւ ոչ էլ մահու դաժան գնդակից։

Անէծք՝ այն հօրը՝ չի մղում որդուն,
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.
Ամօթ այն հային և բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք։

ՏՈՒՐ ՁԵՌՔԴ ԵՂԲԱՅՐ

Տուր ձեռքդ եղբայր, ժամ է զարթելու։
Ժամ է՝ ժամ առաջ ոտքի ելնելու.
Մօտ է վախճանը, հայերուս օրհաս,
Լինել-չլինել՝ մեզնից է կախուած..,

Տուր ձեռքդ եղբայր, հերիք համբերենք,
Հերիք օգնութիւն օտարից հայցենք,
Մենք ենք տանջողը, մենք չարչարողը,
Մենք պիտի լինենք մեզի փրկողը...

Մեր վեհ հայրենիք դարերով ճնշուած,
Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկուած,
Պահանջէ մեզնից արիւնով մաքրել
Թշնամու արեամբ լեռներ ու դաշտեր...

Ընտապիր, եղբայր, ա՛ռ, ահա քեզ զէնք,
Սրանով միայն փրկուելու ենք մենք,
Այս է գործ ածում մեր դէմ թշնամին,
Այս պիտի լինի պաշտպան մեր անձին։

ՅՈՅՍ

Թող փրչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն, ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Ո՛ըքան որ կուզէ՝ թող փրչէ հիւսիս,
Յուսով եմ, վաղ-ուշ, գարունը պիտ գայ։

Թուղպը թող պատէ երկինքը պայծառ,
Թանձրը մառախուղ երկիրը թող փակէ,
Տարերք աշխարհիս խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ-ուշ արև պիտ ծագէ։

Թող գայ փորձութիւն, թող գայ հալածանք,
Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը.
Սարսափելի չեն Հայի տառապանք—
Միայն... չի հատնէր խըղճուկի յոյսը։

ԴԱՄՍԱՌ-ԲԱԹԻՊԱՆ.

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Կանգնիր, ով անցորդ,
Դու այս շիրմի մոտ
Եւ հանդիստ կարդա քաջ նահատակին,
Որ կուի դաշտում
Սուր ու վէնք ձեռքում,
Զոհ բերեց կեանքը իւր ազգի փառքին։

Բայց կարեկցութեան
Ո՛չ լաց, ո՛չ կական
Թող չըպղտորեն քո սիրտն ու հոգին.
Նա լալ չէր սիրում.
Կուի փոթորկում
Նահատակն ընկաւ ժըպիտը դէմքին...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ.



ՄԵՆԱԿԻ ՑԻՇԵՑՄԱՆԻՆ

Դուն էլ վեր կացար դէմ արեւծագին,
Գոտիդ կապեցիր քո մէջքը հպարտ,
Աչքդ դարձուցիր շողուն աստղերին,
Ասիր, կը հասնեմ դեռ լոյս չբացուած։

Եւ կեանքի բեռը դրիր քո մէջքին,
Ճամբորդի ցուպը քո ձեռքը առար.
Յոյսն էր շողշողում քո սաթ աչքերին,
Եւ հպարտ-հպարտ-էն ճամբան ընկար։

Ու սիրտդ յուսոտ,
Հոգիդ մրրկոտ,
Միշտ քայլում էիր
Քո ճամբան փշոտ։

Քալէ ու քալէ
Էն ուղին մոտ է.
Ալ-վառ շողերով
Արև կը ծագէ։

Է՜յ, ազիզ ախպէր, շատ ջանել-ջիւան
Կերաւ ու կերաւ էս անկուշտ ճամբան.
Ճառերը ընկան էս ճամբի կիսին,
Սրտերը վառուած՝ յոյսը աչերին։

Հէյ վախ, հէյ վախ, հէյ, նամարդի նման
Քեզ էլ կուլ տուեց էս անկուշտ ճամբան.
Հէյ վախ, հէյ աշխարհ, քեզ էլ կուլ տուեց
Էս ազիզ ճամբան՝ անծէր, անվախճան։

Թէ սաղ մնացինք՝ ու հազար բարով
Կըցանք յաղթանակ բերել մեր երկրին,
Թէ որ մեր երկրէն հազար արիւնով
Կըցանք դուրս քշել վատթար դուշմանին։

Կը գամ կը կանչեմ Բասենայ դաշտին,
«Հէյ՝ ազիզ, ախպեր, ել, մենք յաղթեցինք.
Մենք դուրս քշեցինք անգութ դուշմանին,
Հազար հազարով վրէժ հանեցինք։

Անձրևից մաշած քո ոսկորները
Կը գամ կը ժողովեմ՝ մէկ-մէկ, երգելով
Տանեմ կը թաղեմ Անտոքայ սարը՝
Սասուն ապահով- հանգչիս անխռով։

ԻԾԽԱՆ.



ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ
Թնդացնում ես երկինք-գետինք տենչավառ.
Սուրբ անունդ պիտի յիշի դարեդար,
Հսկայ լերինք քեզ ապաստան Անդրանիկ։

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,
Օձերի պէս պիտի սողան իրանց բունը.
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Չը ցամաքէ մինչ յաւիտեան, Անդրանիկ։

Հայոց կուսանք, դավնեայ պսակ ՀՅոդ հիւսեն,
Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պսակեն.
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն.
Կէցցես յաւէտ դու անսասան Անդրանիկ։

Հայաստանի սոխակները քեզ համար,
Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.
Անյաղթ մնաս, դու քաջ կռւի սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ։



ՀՈՎԵՐՆ ԱՌԱՆ.

Հովերն առան սաթը ու դաթերը,
Ամպերն ելան,—մութն ընկաւ
—Անգին մերիկ, հերիք յուսաս,
Քու շողշողուն աստղն ընկաւ։
Լաց, մերիկ ջան, որ էլ չեմ գայ,
Վերքը սիրտս տուն չեմ գայ...

Կաթիլ-կաթիլ ամպն է ցօղում
Սև ու պղտոր երկնքէն.
Մաղիկ-մաղիկ վերքս է ծորում
Իմ անդիւման, սև սրտէն.
Լաց, մերիկ ջան, որ էլ չեմ գայ,
Վերքս խորն է. ճար չը կայ...

Անդութ կեանքում վերք ստացայ
Սրտանց սիրած ընկերէս.
Անխիղճ կեանքում վերք ստացայ
Անհուշ սիրած քուրիկէս...
Լաց, մերիկ ջան, որ էլ չեմ գայ
Ազիզ բալեդ էլ չը կայ...

Ս. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

* *
*

Մընաք բարով, արև, գարուն
Եւ խնկաբոյր ծաղիկներ,
Կարկաչահոս վրտակ սիրուն,
Կանաչազգեստ բլուրներ.

Մընաք բարով, համբոյր և սէր,
Դէմքով հրեշտակ կոյս չքնաղ,
Վայելչութեան պայծառ ժամեր,
Քաղցրը ժըպիտ, կեանք մատաղ.

Աղքատութիւն ես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք.
Ես քընարս նուիրեցի՝
Վիշտ երգելու և տանջանք...

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՈՐՍԿԱՆ ԱԽՊԷՐ

—Որսկան ախպէր, սարէն կուգաս, սարի մարալ կը փնտռես,
Ասա՛, եարաբ, դու չտեսա՞ր իմ մարալիս, իմ բալիս։

Դարդի ձեռքից սարերն ընկաւ, իմ մարալս, իմ բալէս,
Գլուխն առաւ քարերն ընկաւ, իմ ջիւանս, իմ բալէս։

—Տեսայ, քոյրիկ, նախշուն բալիդ. կարմիր պսակ էր կապել,
Սիրած եարի համբոյրի տեղ, սրտին վարդեր էր բուսել։

—Որսկան ախպէր. ասա՛, եարաբ, ո՞վ է հարսն իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը, իմ մարալիս, իմ բալիս։

—Տեսայ քոյրիկ, սիրուն բալիդ՝ քարն էր դրել բարձի տեղ.
Անուշ քնով տաք գնտակն էր՝ կրծքին սեղմել եարի տեղ։

Սարի մարմանդ հովն էր շփում, վառ ճակատին մարալիդ.
Ծաղիկներն են վրան սգում, քո մարալիդ, քո բալիդ...

Ե. ԽՍԱՀԵԿԵԱՆ

ԱՐԱԶՆ ԵԿԱՒ ԼԱՓԻՆ ՏԱԼՈՎ

Արազն եկաւ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով,
Որտեղ թաղեմ ես իմ դարդը,
Չոր գլուխս տափին տալով։

Ա՜յ իմ Արազ, ջուրդ վարաբ,
Սիրուն եարիս եարաբ տեսաբ.
Ես չը հասայ իմ մուրազին,
Արազ, եարաբ կարօտս առաբ։

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին,
Աստուած սիրես, էրւած սրտիս
Ջուղաբ բերես էկող տարին։

Գիշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասուքս թանաք չինեմ,
Արազ, ծէգը ջրիդ չառած,
Իմ սև դարդը քեզ կը բերեմ։

Կասես չողքը քարին ընկաւ,
Կրակը սրտիս մէջն ընկաւ,
Կամար ունքից, թուխ աչքերից,
Ցաւն իմ ջիւան ջանիս ընկաւ։

Ե. ՅՈՒՍԱՆԵՒՍԿԱՆ

ԱՂԼՈՒԽՍ ԿՈՐԱԻ ՁԵՐ ԴՈՒՌԸ

Աղլուխս կորաւ ձեր դուռը,
Սրտէս դուրս չի գայ մրմուռը,
Բախտը ինձի քցեց Քուռը,
Անուշ տղայ, տուր աղլուխս։

—Քու աղլուխդ ինձ մօտ չըկայ,
Ես կը երդւիմ, «Աստուած վկայ»,
Ով գտել է, թող բերէ տայ—
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ։

—Աղլուխս եարի բաշխած էր,
Ալ աբրեշումով նաշխած էր,
Պատկերս վրէն քաշած էր.
Անուշ տղայ, տուր աղլուխս։

—Քու վարմունքիդ ինչ անուն տամ,
Քիչ է մնում որ անվերջ լամ,
Մօտս լինի՝ բերեմ կուտամ—
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ։

ՆՊԱՏԱԿԻՍ ԳԷԹ ՄԻ ՄԱՍԸ ԿԱՏԱՐԻԷ

Նպատակիս գէթ մի մասը կատարէր,
Եարալի բլբուլ եմ.
Հայրենիքիս ազատութիւն տեսնեմ ու մեռնեմ,
Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլն եմ,
Սարերի գիւլն եմ։

Ախ իմ դարդս շատացել է, չեմ կարող դալ էս,
Եարալի բլբուլ եմ,
Դարդի ձեռքից որ ջուրն ընկնեմ ազատւեմ.
Տուն, արի շուտ արի, եարալի բլբուլն եմ,
Սարերի գիւլն եմ։

Ապաբախտ հայդուկիս, Տէր իմ, դու խղճա,
Վահ՝-գիտի, բլբուլն եմ,
Մի թողնիր թուրքի գնդակով զուր գնամ կորչեմ.
Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլն եմ,
Սարերի գիւլն եմ։

Առաջ ցաւս մէկ էր, հիմա դառաւ տաս.
Վահդ-իտի, բլբուլն եմ
Այս դառը ցաւերին ես ոնց դիմանամ.
Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլն եմ,
Սարերի գիւլն եմ։

ՎԱՆԵՑՈՅ ՁՈՒՆԻԱԳԸ

Բաւ է, եղբարք, վիզը ճրկել,
Ողորմելի երևել.
Ժամանակը հասել է,
Հայ դրօշակին ծածանել։

Հայոց լերինք թող թընդան,
Հայոց բերանք թող գոռան,
Հայաստանի դաշտերում,
Քաջ Հայերու զիլ «ուռան»։

Արիւն վոթէ թող Հայը,
Աղաղակէ միշտ ուռա,
Մեր թշնամին այսուհետ,
Սըրտի վախէն թող դողայ։

Այսուհետև արտասուք
Վախկոտները թող հեղուն.
Հայքս արդէն պատրաստ ենք
Վոթել ազնիւ մեր արիւն։

Ու չենք դադրիլ վոթելու
Մեր հայ, ազնիւ արիւնը,
Մինչև ազգը չի ստանայ
Իրա ազատութիւնը։

Ախ ու վախը մենք մոռցանք։
Այժմ գիտենք մենք ուռա.
Հայք, զոչեցէք միշտ ուռա,
Որ թըշնամին մեր դողայ։

ԴԱՄԱՍ.—ԲԱԹԻՊԱՍ.



ՀԱՅԴՈՒԿՆԵՐԸ ՎԱՆԱՅ ԾՈՎԻ ՎՐԱՅ

Ուշ գիշերին ծովն է խաղաղ,
Ջրեր վճիտ ու յստակ,
Ջինջ է երկինք միապաղաղ,
Աստեղազարդ կապուտակ։

Պարզ հորիզոն մէկ էլ յանկարծ
Սև ամպերով մռայլուեց,
Քամի բրդաւ, քամի անսանձ,
Եւ ծովակն այլայլուեց։

Կուրծքն ուռած ու փրփրուն,
Ալիքներն ահագին,
Սուգ ու հառաչ, գոռ ու գոչիւն
Թռան ծոցից ծովակին։

—Սիրուն ծովակ, ասա՛ դու մեզ,
Էլ ինչ նորից յուզեցիր,
Այն ինչ բոթ էր, որ բերեց քեզ
Քամին մոլար, անձանձիր։

Արդեօք ողբեր ու հառաչանք,
Երգեց նա քո ականջին,
Կոյսի մրմունջ, մեր հեծեծանք,
Թէ ճիչ անմեղ մանկիկին...

Արիւնապատ մեր ձորերում
Հիւսել էր իր մեղեդին.
Թէ աւերակ մեր գիւղերում
Կազմել երգը ցաւագին...

Ա՜խ այդ ցաւոտ սև երգերով
Մեզ քուն ասին մեր մայրեր,
Ու սարսափի զրոյցներով
Խլացրին մեր ճիչեր։

Եւ այնուհետ շատ տարիներ
Նոյն երգերը տխրագին,
Սև դարձրին կարմիր օրեր,
Վախով լցրին մեր հոգին...

Մի անգամ էլ մեր լեռներում
Մի հոգմ փչեց ահաւոր.
Էլ արտասուք նա չէր երգում,
Ոչ ողբ ասում սգաւոր։

Սև լեռների մռայլ ծոցից
Խլած հսկայ գոչիւններից,
Սև ժայռերի գոչիւններից
Նա կազմել էր իր երգեր։

Գզտոր-կարմիր գետը յուզած
Այնտեղ ունէր իր բաժին.
Մայր բնութիւնն էլ զարհուրած
Միացել էր այդ երգին...

Երբ ժայռերը գոռում էին,
Հայրն ինչպէս լուռ կենար.
Երբ լեռները գոռում էին,
Մեր սիրտն ինչպէս դիմանար։

Եւ խլեցինք մենք պատեանից
Սրեր վաղուց մոռացած.
Եւ լեռները դողում էին,
Սուրբ վաթանն էր աւերած...

Լուռ կաց, քամի, մի փչիր, լռա,
Ճատ յուզեցիր ծովակին.
Թող հնչայ մեղմիկ զեփիւռ,
Թող, հանդիստ թող ծովակին։

Լուռ կաց, ծով, դարերի լալկան,
Էլ բաւ այսքան հառաչներ...
Մենք զօր ունինք-սուր, հրացան,
Ճուտ վերջ կ'առնեն քո ցաւեր...

Թող միայն մեզ շուտով լողանք,
Թող որ հասնենք այն ափին.
Տես, լսւում են ճիչ, հառաչանք,
Սղերս ու ողբ անմեղին...

Դէհ, ընկերներ, զարկենք թիեր,
Հզօր բազկով միասին.
Մօտ է ափը, հէ, ախպէրներ,
Հա, հասանք ձեր հաւարին...



ՍԻՓԱՆԱՅ ՍԱՐԵՐ

Լո՜, լո՜, լո՜.—Սիփանայ սէգ սարի վերայ,
Կարիճները շտապով գալիս են միանում.
Այնտեղ անվախ որդիք հսկայ լերան վերայ,
Զէնք ու զրահի են ընտանում։ (կրկնել)

Ահա վառւում են՝ գինւում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,
Արիւնը նրանց բոբբոք սրտի մէջ եռում,
Թռչում, անցնում անհամբեր.
Զերթ Սիփանայ պինդ քամին,
Սլանում են դէպի ցած,
Դաշտի մէջ թշնամին
Եւ մեծ վրէժ անմոռաց—
Ահեղ կռւում նրանից առնում,
Հատու սուսերը հանում,
Յեղապետին են սպանում,
Նա էր վարում քաջերին։ (կրկնել)

Բոլոր այժմ ցեղն ոտի կանգնած՝
Թշնամու դէմ մահու մարտի է կանչում—
Արեան մեծ վրէժ է թշնամուց պահանջում,
Եւ թշնամին պարտուած՝
Թողնում փախչում սարէ սար՝
Յետ ձգելով մեծ աւար։ (կրկնել)

Արիւն թափեցին, արիւնի փոխան
Արիւն քամեց ծարաւի սուսերը,
Նրան յաղեցած՝ դրեցին պատեան,
Ելնում են ի լեռ—սէգ Սիփանն ի վեր.
Սէգ Սիփանայ կանաչ գլխին յաղթող
Ցեղն անում է մեծ խնդում,
Ու ամպերի թանձրութեան միջից
Սիփանն ամբողջ է թնդում։
Էլ չեն գալ մեզ մօտ թշնամիք,
Սուր տեսան մեր պողվատից։



ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

III

Ինձ տեղ տուէք, Սիփան սարեր,
Բռնաւորի լուծն եմ թողեր.
Ազատութիւնս արնով գնած,
Գահէք ձեր ծոցն, ազատ սարեր։

Մասսից ազատ, Մասսից բարձր ես,
Աշխարհից թանկ, ազատութիւն.
Կեանքի սէրն ես, կեանքի տէրն ես,
Արծրւի պէս բարձր ես թռնում։

Ազատ օդում, ազատ հովում
Արծրւի պէս ազատ կ'ընեմ.
Բաց թևերս թափ-ծափ տալով
Ախպրտանցս քով կը թռնեմ։

Հայ ախպրտանք, ձեր ժանգ հղթան
Իմ երկաթէ սուր կտուցով
Ես կը կտցեմ, կը բրծրծեմ,
Մէկտեղ կ'երգենք ազատ կրծքով.—

—,,Ազատութիւն, ազատութիւն,
Կեանքի արև ազատութիւն,
Մասսից ազատ, արծրւից ազատ,
Աշխարհի տէր ազատութիւն։

,,Արծրւի պէս բարձր ես թռնում,
Մասսից բարձր ազատութիւն.
Դո՛ւ, կեանքից վեր, դու լոյս-արև,
Ազատութիւն, ազատութիւն''...

ՀԱՅ ԳՈՒՍԱՆ



ՄԻ ՂԱՐ ԲԼԲՈՒԼ

Մի լաւ բլբուլ, քեզ մի տանջիր
Որ փոթորիկն անիրաւ,
Վարդերդ սիրուն, վարդերդ կարմիր
Թփից պոկեց ու տարաւ։

Կանցնին օրեր, կուգայ կրկին
Մի նոր գարուն վարդաբեր,
Եւ մոռացած քո վիշտը հին
Նորից կերգես վարդի սէր։

Բայց վայ կեանքին այն խեղճ երգչի
Որ վաղաժամ որբացաւ.
Իւր սիրելի խօսուն վարդին
Սառը հողի մէջ տեսաւ։

Երգչի համար գարուն չկայ
Ոչ էլ նոր վարդ կը սիրէ.
Նա պէտք է լայ, պէտք է սրդայ
Մինչ յաւիտեան կըլռէ։

ՍԵՒ—ՔԱՐԵՑԻ ՍԱՔՈՅԻՆ

Այն օրը, որ ես քեզ տեսայ,
Քեզ /նձ ընկեր ես ընտրեցի.
Որտեղ տեսայ Սև–Քարեցի
Քո պատճառով շատ սիրեցի
Սև–քարիդ զուրբան Սաքո–ջան...

Հարցրեցի վարդապետին
Ասի՝ որտեղ է արեզան.
Արեզայ չէ. ասաւ, որդի՝
Հայդուկ է այդ սիրուն տղան.
Հայդուկիդ զուրբան Սաքո-ջան։

Դերիկ-վանքից վերադարձան,
Նշան դարկելու գնացին
Պետոն, Կարօն Դաշնակցական
Ընկեր էին մեր Սաքոյին.
Ընկերիդ զուրբան Սաքո-ջան։

ԿՌՈՒՆԿԻՆ

Կանչէ, կռունկ, կանչէ
Քանի գարուն է.
Ղարիբներու սիրտը
Գունտ—գունտ արուն է։
Կռունկ—ջան, կռունկ—ջան, գարուն է
Կռունկ—ջան, կռունկ—ջան, գարուն է
Ա՜խ, սիրտս արուն է։

Կանչէ, կռունկ, կանչէ
Քանի արօտ է,
Աշխարհն արեգակ
Սիրտս կարօտ է։
Կռունկ—ջան, կռունկ—ջան, արօտ է
Կռունկ—ջան, կռունկ—ջան, արօտ է
Ա՜խ, սիրտս կարօտ է։

Կանչէ, կռունկ, կանչէ
Քանի արև է.
Աշուն կերթաս երկիր
Եարիս բարևէ։
Կռունկ—ջան, կռունկ—ջան, արև է
Կռունկ—ջան, կռունկ ջան, արև է
Ա՜խ, եարիս բարևէ։

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՁԱՆԳ

Ազատութեան Զանգ, դու վեհ զօրանջէ
Կովկասեան վսեմ, վէս բարձրունքներից,
Ինչպէս մրրիկ, շաչէ, շառաչէ,
Մինչև սիգապանծ Ազատն-Մասիս։
Անհուն վրէժի եւ ըմբոստացման,
Ե՛ւ բուռն ցասման բառաչը հնչէ,
Ժողովուրդների անկախ, ինքնիշխան՝
Դաշն ազատական՝ խրոխտ զօրանջէ։
Լեռներից խրճիթ, և ձորերից ձոր,
Եւ սրտերից սիրտ ձայնդ թող թոչի,
Եւ ընդվզումի պատգամդ հզօր,
Յաւիտեան անլուռ երբէք չը հանգչի։
Ըմբոստ ոգիներ, թէ առէք, հասէք,
Եւ զանգահարենք ամուր, միահամուռ.
Զանգն ազատութեան զանգահարեցէք
Կովկասի համար հանուր, ընդհանուր։
Եւ որոտա՛, Զանգ, և դու արթնացրու
Դարևոր նիրհից Մասիսն ու Կազբէկ,
Թափ տուր թևերդ, արծիւ լեռներու,
Քնած առիւծնե՛ր, բաշերնիդ թօթուէք։
Եւ բաւական է՝ անարդ լծի տակ
Մենք սարուկ մնանք՝ ձեռներս շղթայ.
Կապանք փշրելու սեղ թո՛ղն ու կրակ,

Մեզ ուժ և կորով, վրէժ որոտա՛.
Եւ մեզ ամենքիս մռնչա՛, կոչէ՛
Մահուան ու փառքի դաշտը պայքարի.
Սրբազան ռազմի շեփորը գոչէ՛
Ընդդէմ բռնութեան, ամբարիշտ Չարի։
Հրաբուղխների դու վսեմ երկիր,
Եւ ծովերից-ծով հուժկու մրրկէ՛.
Քո սուրբ ոտքերով և զարկ,—և ժայթքիր
Բռնութեան գլխին,—աշխարհը փրկէ,
Եւ ազատութեան նորոգ արևի
Ոսկի ներբողդ, Զանգ, զարթ հնչէ՛.
Բիւր գագաթներից ազատ Կովկասի
Սուրբ եղբայրութեան տօնին մեզ կանչէ՛։

Ահ. Խաչատրեան

ԿԱՂՆԻ

Ամառի ափին հպարտ անսասան,
Կանգնած էր մի մեծ ալևոր կաղնի՝
Անյաղթ վիթխարի, հսկայի նման՝
Կարծես տէր լինէր բոլոր աշխարհի։

Շատ քաջ որսորդներ և անհոգ հովիւ,
Ուզել են իրանց բազուկը փորձել,
Եւ վաւ գնդակի, սուր կացնի անթիւ
Վէրքերով նորա՝ հատ բունը ծածկել։

Արհամարելով շանթեր ու կայծակ՝
Ծեռ քարի նման ամուր կուրծքը բաց,
Ընդունում էր նա անվախ համարձակ
Գլխին տեղացող ամեն մի հարուած։

Փչում էր մրրիկ, գետին տապալում
Հին ու նոր անթիւ ծառեր։ Անդադար
Դարևոր կաղնին առաջ էր աճում,
Մտքում ծաղրելով հողմ ու ողջ աշխարհ։

Բայց հսկայ կաղնու պինդ կեղևի տակ,
Ամրակազմ կրծքում որդեր ծնեցին,
Եւ նորա ամուր շէնքը շարունակ
Անխնայօրէն կերան մաշեցին։

Էլի քիչ տարի և ... «մնաք-բարև»,
Մնաց, օրօրւեց ու ... հսկան ընկաւ.
Կատաղի քամին ճիւղեր ու տերև
Սրբեց ու տարաւ աշխարհով արաւ։

ՌԱՓԻԱՍ

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ինչպէս փչէ հուժկու մրրիկ սիեզերքի խորերէն
Հաւաքելով երկնից դաշտէն ցրիւ եկած իր բանակ.
Սև ու ճերմակ բոլոր ամպեր դէպ միենոյն նպատակ
Կըսլանան հետեելով մէկը միւսին վեհօրէն։

Այնպէս այժմ թող մռնչէ այս մեծ երկրին ծայրերէն՝
Սուրբ մրրիկը, ըմբոստութեան իր թափովը բովանդակ.
Թո՛ղ սլանան ամ աներկիւղ դէպի մէկ վեհ նպատակ
Ազատութեան ցրիւ եկած որդիք հեռու վայրերէն։

Որպէս զի հոն բոլոր հղօր գայրոյթները խմբուին,
Հոն, ուր փռած հովիտներ կան,հոն՝ ուր լեռներ կան հիւանդ,
Ուր ձիգ դաշտեր կը դժգունեն բռնութեան տակ հնաւանդ
Ուր կը շորնան բիւր ծաղիկներ, դեռ չըծաղկած ընաւին։

Որ այն ատեն խոր ցասումի որոտներէն գայրագին,
Ոտքի կանգնի թարմ ոյժերով հայ գեղջուկը վեհապանծ.
Եւ լայն դաշտեր ազատութեան հեղեղներով ոռոգած՝
Մնուցանեն ծոցերնուն մէջ արմատները նոր կեանքին։

ՎԻՏՍ.

ՎԵՐՋԱԼՈՅՍԻՆ

Եւ հեռու, այնտեղ, արիւնոտ կեանքի
Խաւար դաշտերում թաղուած են յաւետ.
Ըմբոստ մարտիկներն, որ հառաչանքի
Ողբերն երգելով չքացան անհետ,
Եւ խոր սուզեցին դաժան, բռնաւոր
Ծայրերին զարկած փշուր ու ջախջախ
Յորձանքների մէջ։ Եւ լո՜ւռ, մեր բոլոր
Ու անհուն ցաւի երազներն անվախ
Թող հանդչեն նրանց նիրհած դանդերին,
Եւ սուրբ բարկութեան կարմիր հնոցում
Թող միշտ շիկանան, որ այն օրերին
Երբ կուի պապակն իր խորունկ ծոցում
Մեր սերունդների մրրկուած. հոգին
Նորից գալարէ, առկայծեն յանկարծ,
Եւ լուսաւորեն ժայռերը մթին,
Զորերը խաւար, ճամբէքը անդարձ։

Հ. ԱՆՈՒՇԵԱՆ

ԱՌԱԿ

Հաւաքեան մի օր ծառ ու ծիլ բոլոր,
Որ իրանց համար ընտրեն թագաւոր.
Խորհուրդ արեցին և դառան ապա
Ասին ձիթենուն...

«Եղիր թագաւոր, իշխիր մեզ վրա»:
—Իմ ինչին է պէտք. ասաց ձիթենին.
Ես իմ գործս ունեմ. չէ՛ որ ամենին
Մնունդ եմ բաշխում իմ պտուղներով
Ես ինչպէս իշխեմ իմ բարութիւնով...»

Նորից խորհեցին և դառան ապա
Ասին թզենուն.
«Եղիր թագաւոր, իշխիր մեզ վրա».
—Ոչ, ինձ յարմար չէ, ասաց թզենին.
Ես հաճելի եմ չէ՛ որ ամենին
Քաղցր ու անուշ իմ պտուղներով.
Ես ինչպէս իշխեմ իմ քաղցրութիւնով»:

Խորհուրդ արեցին և խաղողենուն
Եկան դիմեցին

«Ինչեր էք ասում.
Թողնեմ իմ գինին ոսկի ու պայծառ,
Որ ուրախութեամբ լցնում է աշխարհ,
Զարթ երգերով թնդում սար ու ձոր.
Ո՛չ, իմ բանը չէ լինել թագաւոր...

Երկար խորհեցին ծառ ու ծիլ բոլոր,
Որ չար տատասկին անեն թագաւոր.
Ծառ ու ծիլ բոլոր հաւաքեան եկան
Եւ հեզ ու խոնարհ խնդրեցին նրան.
«Եղիր թագաւոր, իշխիր մեզ վրայ.»
Եւ սէգ ու հպարտ պատասխանեց նա.

—«Կըլինիմ թագաւոր. և դորա համար
Իմ սուր փշերով ես շատ եմ յարմար.
Կը խայթեմ նրան, կը խոցեմ խորին,
Ո՞վ չըհնազանդի իմ հրամանին.
Իմ թփերի տակ մտէք ապաստան
Ասաց և սրեց փշերը դաժան:

Ս. ԽՍԱՀԱԿԵԱՆ

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Սև մեզարս ճոճք եմ արեր
Ճոճքն եմ կապեր ծառերէն.
Լալէն, լալէն քուն է մտեր
Իմ որբ բալէն, իմ լալէն...

Նանիկ էրա, նանի դար-դար
Դարդեր ունիմ քանց ծով ու սար։

Հար թշնամու հրէն, թրէն,
Փախան, ընկած սար ու քար.
Քեզի հար լուս, սրտիս վրէն
Գրկած լացի սար ու քար։

Օ՛րօր բալաս, օրօր նանի
Քամբախտ սէրդ չարդ տանի։

Ծիծս կրծքիս կպած. ցամքած
Էլ կաթ չունիմ քեզ տալու.
Սոված, ծարաւ թափս կտրած
Օրօրելու ու լալու...

Օ՛րօր նանի մի լայ, մի լայ,
Իմ մէկ ու ճար ազիզ բալայ։

Ցորեկ եղաւ, հիմի հանդէն
Կթանն էկաւ, մերը ուր ա.
Վախ մեր հօտը էն-դուշմանը
Զարկեց տարաւ ուրա՛, չկայ։

Նանիկ էրա նանի, դար-դար
Դարդեր ունիմ, քանց ծով ու սար։

Բռնաւորը թուրը քաշեց
Արիւն կապեց սար ու ձոր,
Կարմիր—կարմիր արցունք թափեց
Մեր վաթանի սար ու ձոր։

Նանիկ էրա, մի լայ, մի լայ
Սև օրերիս նշխուն լալայ,

Բռնաւորը հրաման տաւ,

Բիրտ զազախը չար, անիրաւ
Սուրբ քրոջդ անպատուեց։

Իմ աչքի լոյս բալէն դուն ես,
Սև սարերի լալէն դուն ես։

Էն տմպը չէ սարի վրէն
Ահ ու զարզանդ որոտաց.
Վեր կաց ու տես թշնամու դէմ
Ռումբ ու կրակ որոտաց։

Վեր կաց ու տես, անուշ բալայ,
Էս սարերի կարմիր լալայ։

Էն ամպի մէջ կայծակները չեն
Հուր — հրեղէն թափեցին.
Քաջ ֆիդայիք, ախպրտիքդ են
Կրակ—հեղեղ թափեցին։

Վեր կաց բալաս, կռիւ գնա,
Թող վախկոտը տունը մնայ։

Ազատութեան դրօշակն առ,
Փշրէ գնտան ու շղթայ,
Ազատութեան օրայ համար
Կռիւը, մեռիր, իմ բալա...

Արծուի պէս կռիւ թռի,
Սարուկ գնա, ազատ արի։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՄԵՆԱԿ ՆԻՒԲԱԿԱՆ ՍՏԻԼԻՆ

(Եղոր Աստամեան)

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր,
Հովն է հեծեծում Բասենայ դաշտում.
Ոսկի երգերդ, իմ ազիզ ընկեր,
Էն հովն է երգում Բասենայ դաշտում։

Քաջ ընկերներով կռիւ սլացար
Ազատ երգերով Արազի դաշտում.
Նամարդ թշնամուն զարկիր, զարկուեցար
Ընկերներիդ հետ Բասենայ դաշտում։

Ու ժողովուրդը կարօտ ը սիրուն,
Բասենայ դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Երգում են անվերջ երգերդ սիրուն,
Ու չեն մոռանում երգերդ անուշ։

Ա՜խ, սուրբ վէրքերով ընկերներիդ հետ
Արնոտ հողի տակ անուշ քնեցիր,
Թող ծանր չթւայ այն հողը վրէդ,
Որ այնպէս հզօր, անհուն սիրեցիր...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն
Իմ ծերացած մօր մօտ էր։
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսոս որ երազ էր։

Կարկաչահոս աղբիւր այնտեղ
Թաւալումէր մարգարիտ.—
Նա յստակ էր որպէս բիւրեղ—
Այն երազ էր ցնորամիտ։

Եւ մեղեդին տխուր, մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.—
Մօրս համբոյրը ես զգացի.—
Ա՜խ. ափսոս, որ երազ էր։

Կուրծքին սեղմեց կարօտագին.
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—
Բայց արտասուք գնում էին
Ա՜խ, այդ ինչու երազ էր։

Ս. ՉՈՒՀԱՋԻՋԵԱՆ

* *
*

Ազատ Աստուածն այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել
Իմ հոգանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգևել—
Ես անբաբբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թևերով
Ազատութիւնն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել—
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել։

Թոթով լեզուս մինչ կապերը
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն, որ ասացի
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ—
Ազատութիւն, դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

«Ազատութիւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից.
«Ազատութեան դու զինուոր
Կամիս դրուիլ այս օրից։
Ո՛հ, փշոտ է ճանապարհդ.
Քեզ շատ փորձանք կը սպասէ—
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ է»։

—Ազատութիւն, զոչեցի,—
Թող որոտայ իմ գլխին,
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան
Մինչև անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ
Անդադար ազատութիւն։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԱՐԱՔՍԻ ՀՐՏԱՍՈՒՔԸ

Մայր արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին, հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ.

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջրով եղերքին
Դարիւ դարիւ խրփելով
Փախչում էին լալագին։

«—Արաքս, ինչու՞ ձրկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած՝
Սրգաւոր ես ինձ նման։

Ինչու՞ արցունք ցայտում են
Քու սէգ, հպարտ աչերից,
Ինչու՞ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի պղտորիլ յատակդ,
Հանդարտ հոսէ՛ խայտալով,
Մանկութիւնը քու կարճ է.—
Շուտ կըհասնիս դէպ 'ի ծով։

Մեջքը ուռցուց Սրաքսը.
Փբբփուբ հանեց իբ տակից,
Ամպի նբման գոռալով
Էսպէս խօսեց յատակից.

—«Խիզա՜խ, անմիտ պատանի,
Նիբհս ինչու դաբևոբ
Վբդովում ես, նոբոգում
Իմ ցաւեբը բիւբաւոբ։

Սիբելիի մահից յետ
Ե՞բբ ես տեսել, որ այբին
Ոտբից գլուխ պբճնուի
Իբ զաբդերով թանկագին։

Կաբ ժամանակ, որ ես-էլ
Ձքեղազաբդ հաբսի պէս
Հագաբ ու բիւբ պճբանքով
Փախչում էի ափերէս։

«Ոբի համաբ զաբդաբւում,—
Ոբի աչքը հբապուբեմ,—
Ճատեբն՝ ինձ են ատելի,
Ճատեբին՝ ես օտաբ եմ»։

Էլ չի խօսեց Սրաքսը,
Յոբձանք տուեց ահագին,
Օդակ օդակ օձի պէս,
Առաջ սողաց մոլեգին։

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կանաչ, վիթխաբի ընկուզենու տակ,
Իբենց հասակի կաբգով, ծալապատակ,
Միասին բաղմած,
Մի շբջան կազմած,
Քէֆ էին անում
Եւ ուբախանում
Մեբ հբսկայ՝ պապեբն ու մեբ հայբեբը՝
Գիւղի տէբեբը։

Մենք, առոյգ ու ժիբ զեղջուկ մանուկները
Եբեք դասընկեբ,
Նբանց առաջին գբլխաբաց կանգնած,
Ձեռքնեբբս խոնաբհ, սբտնեբիս գբբած,
Ձիլ, ուժեղ ձայնով նբբանց սպասում
Տաղ էինք ասում։

Եբբ գբւաբթաձայն մեբ եբգբ լբուեց,
Մբուայլ թամազէն բեխեբն ոլոբեց,
Նբբա հետ վեբցբին լեք բաժակնեբբ
Բոլոբ մեծեբբ
Ու մեզ օրհնեցին.—Ապբէ՛ք եբեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապբէք...

Ժամանակ անցաւ, նրանք էլ անցան,
Զբաղթ երգերը վրչտալի դարձան.
Եւ ես յիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս
Ինչու ասացին.—Ապրէ՛ք, երկրէ՛ք.
Բայց մեզ պէս չապրէ՛ք...

Խաղաղութիւն ձեզ, մեր անբախտ պապերը
Ձեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել։
Այժմ, տխրութեան թէ քէֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեր զաւակներին՝
Ձեր խօսքն ենք ասում—Ապրէ՛ք, երկրէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէ՛ք...

Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻ ԲՈՂՈՔԸ

Ո՞վ իմ անգութ ճակատագիր,
Ինչու ինձ բանտ նետեցիր
Ո՞ր յանցանքս, ո՞ր ոճիրս
Խստիւ պատժել ուզեցիր։

Դժբախտ ազգիս սև օրհասին
Թողած տուն, տեղ, ազգական
Կեանքս զոհել ես ուխտեցի
Ազատութեան սուրբ գործին։

Արաքս, Մասիս յետես թողած
Հէր—Զարեանդ չուեցի
Դաշնակցական դրօշի տակ
Բոլոր ոյժովս գործեցի։

Այդ «յանցանքիս» համար ահա
Զգթայակապ բանտ ընկայ
Տանջանքներիս ծանր ցաւին
Մութ գնտանն էր վկայ։

«Հայի տղայ, յամառ տղայ
Ազգ, հայրենիք մոռացիր,
Ազատութեան քո վեհ հոգին
Մութ բանտի մէջ խորթ թաղիր»։

ԹՈՐՈՍ

ԵԹԷ ԿԱՄԻՔ ՓՐԿԵԼ ԹՇՈՒՌ ՀԱՅՐԵՆԻՔ

Եթէ կամիք փրկել թշուառ հայրենիք
Նախ պիտի կապենք մեր մէջ մի սիրտ ու հոգի,
Եթէ կամիք անցեալ փառքին տիրանալ
Հարկաւոր չէ կուսակցութեան բաժանուել։

Սրիք եղբայրք միանանք
Բաւ համարենք մեր տանջանք
Ի սէր ճնշած հայ ազգին,
Գործ դնենք մեր ճիգ ու ջանք։

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին
Որ մեր տունը իրանց ձեռքով քանդեցին,
Ուրիշների սուտ պարգևից շլացած,
Որ մատնեցին մինչև այժմ գերութեան։

Արիք եղբայրք և այլն։

Մենք Հնչակեան, եղբայք, դուք Դաշնակցական
Մենք երկուսս էլ կուլանք վիշտը հայկական.
Արիք վճռենք, հոգով սրտով միանանք,
Ձեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք։

Արիք եղբայրք և այլն։

Մի նպատակ և մի վսեմ գաղափար
Մեզ կը սպասեն անհամբեր ու անդադար.
Ուխտենք, եղբայրք, յայտնենք սրտի միութիւն,
Միութիւնով պիտի գտնենք փրկութիւն։

Արիք, եղբայրք և այլն։

ՍԵՐՈԲ ՓԱՇԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Գլուխդ Բաղէշ և մարմինդ ի Մուշ,
Հովի պէս անցար դու քաջի նման.
Անունիդ մատաղ, թուրքի աչքի փուշ.
Աղբիւր Սերոբ ջան, անունդ քաղցր-անուշ։

Անմահ դիւցազն Խլաթայ
Հսկայ կորիւն Նեմրութայ,
Հայերուս փառք և պաղծանք
Քեզ մատաղ, Սերոբ փաշայ։

Ասկից վերջ Բաղէշ քեզ պիտի յիշէ
Եւ յորդ արցունքներ միշտ պիտի թափէ
Գլուխդ, գերեզմանդ, երբ նա կը տեսնէ
Աղբիւր Սերոբ ջան, միշտ պիտի կանչէ։

Հողի տակ ննջէ դուն զաւակ Հայկայ
Անունդ ազգիս մէջ միշտ պիտի մնայ
Հայք քեզ կոչեցին դիւցազն Խլաթայ,
Թուրքը սարսափած քեզ կասէ փաշայ։

Սարէ Սիփան, սև սար Գրգուր և Նեմրութ
Որբ են մնացել, և կը քաշեն քո կարօտ
Երկիր դող հանիր անցար քո խմբով
Աղբիւր Սերոբ ջան մաշանք քո սիրով։

Մենք քո ընկերներ կուխտենք երդումով,
Որ վեր սար ելնենք մեր զէնք զրահով,
Երթանք միշտ լեցուն փուշ և տատասկով
Աղբիւր Սերոբ ջան, քո ճանապարհով։

ԹՂԹԱԻԿԻ ՁԻՆ

Ընցաւ տարին, Հայոցս էլ փառք ընցաւ հետ.
Դրախտի սարէն գարունն յետին բարև ետ,
Կտրիճք առան զենքերն իջան տակ հողին,
Վա՜խ մըր գլխուն, սև մուր էկաւ մեր օրին։
Հայու աչեր թող մըզի լան,
Հայու քաջեր զէնքեր առած մըզի դան։

Հայեր, զերի՛ եղանք բաղդին անողոք,
Ստուած, հրեշտակ, մարդ չ՛լսեց մըր բողոք,
Մըր լացերու ձէն ծածկաւ Տարնոյ տակ,
Մշու դաշտեր պահեն սրտից հառաչանք։
Հայու աչեր թող մըզի լան,
Հայու քաջեր...

Մըր աշխարհի քակվուկ շէնքերու ներքև,
Նստուկ մամ, պապ՝ ճըժեր մացին անարև,
Ն օթի՝ տկլոզ, ա՛խ, չկայ տէր տիրական,
Անգութ քրտու զըլմին էղած ենք խուրբան։
Խարիպ ազբերը թող մեզ լան,
Հայու քաջեր...

Մատղաշ ազջիկն ու հարս հալաւ մի չունի,
Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի
Էնպէս դրած ձեռքերն աչից ամչըկոտ,
Գութի, սիրոյ, ողորմութեան է կարօտ։
Հայ ազջիկներ թող մեզ լան,
Հայու քաջեր...

Կեցէք, Մշու դաշտի քամիք, քիշմ կեցէք,
Մըր ողբաձէն բարեն էլ ձըր հետ տարէք,
Ու եր ընցնիք սուրբ օրէնքի կամարից,
Հոնկուց ըսէք խարիպ մըր հայ ազբերից։
Էլ ինչ պէտք է որ մեզ լան,
Հայու քաջեր...

Մացէք բարով, իմ հէր ու մէր, քուր, ազբէր,
Մացէք բարով ծանօթ սարեր ու դաշտեր,
Գուցէ մեռնիմ, էլ չտեսնիմ այսուհետ,
Գարտ մի՛ էնէք, դուշմանիմ՝ տարեր եմ իմ հետ։

ԱԶԳ ԻՄ, ՈՐՔԱՆ ՆԿՈՒՆ ՄՆԱՍ

Ազգ իմ, որքան նկուն մնաս,
Սիրտս քեզանից չի զատի.
Հազար տեսակ չարչարանք տաս,
Սիրտս քեզանից չի զատի։

Քեզ չեմ մոռանայ յաւիտեան,
Հարազատ մայր իմ Հայաստան,
Թէկուզ դրախտն էլ ինձի տան,
Սիրտս քեզանից չի զատի։

Քեզանով եմ ես երջանիկ,
Իմ սիրելի, իմ անուշիկ,
Ծոցիդ մէջը հանգչիմ մայրիկ,
Սիրտս քեզանից չի զատի։

Ջիւանին եմ, քեզ բարեկամ,
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,
Հնդկաստանին էլ տէր դառնամ,
Սիրտս քեզանից չի զատի։

ԳԱՐԴՍ ԼԱՑԷՔ

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալան-ալան ծաղիկներ.
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով-հովեր...

Երկինք-գետինք գլխուս մթնան,
Անտուն-անտէր կուլամ ես.
Եարիս տարան, ջանիս տարան,
Հոնգուր-հոնգուր կուլամ ես...

Ա՜խ, եարս ինձի հանեց սրտէն,
Անճար թողեց ու գնաց.
Սրտիս սաւդէն—խորունկ եարէն
Անդեղ թողեց ու գնաց...

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալան-ալան ծաղիկներ.
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնուց զով-հովեր...

Ա. ԽՍՀԱԿԵԱՆ

Ա՜խ տիւք ինձ

Ա՜խ, տէք ինձ քաղցը մի քուն,
Կեանքից հեռո՜ւ սրլանամ
Այն աշխարհը, ուր խնդութիւն,
Ուր սէրն է միշտ անթառամ։

Քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,
Վառ կանաչից իմ վերմակ,
Նոցա բոյրը զբաղեցնին
Ծծեմ անվերջ ես անյագ։

Եւ խայտալով իմ առաջին
Վտակն անուշ խոխոջէ,
Մի թարմութիւն եղեմային
Շորս բոլորքս տարածէ։

Եւ ինձ ժպտի արշալուսին
Գարնան մատաղ արեգակ,
Եւ խայտալով իմ ճակատին
Խաղայ զողորիկ վառ լուսնակ։

Եւ աչագեղ կոյսն ականջիս
Իւր մեղեդին նրւազէ,
Եւ հերարձակ սիրով վրդիս
Փարէ, մեղմիկ փաղաքշէ...

Եւ յաւիտեան վայելչութիւն
Գրկէ հոգիս, յաղենամ...
Ա՜խ, տէք ինձ քաղցը մի քուն,
Հեռո՜ւ, հեռո՜ւ սրլանամ...

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՕԽՏԸ ԱԼԲՈՎ

Օխտը սարով հեռու քեզնէն
Քու շաքով եմ ապրում.
Օխտը տարով բաժան քեզնէն
Քու կարօտով եմ էրում...
Դարդիս դարման, եարիս մահլամ,
Ջան ու ջիգեար եարս ուր ա...

Գիշեր-ցերեկ զրկած քէնէն
Ծով է կտրում աչքերս,
Բալի դարիր մի ճամբորդէն
Խաբար առնեմ իմ եարէս։
Դարդիս դարման, եարիս մահլամ
Թաղ ու պսակ եարս ուր ա...

Օխտը տարի ծում ու պասով
Օր ու արևս սևցուցի,
Բալի Մշու-Սուլթան զօրքով՝
Իմ մուրազս տար ինձի...
Դարդիս դարման, եարիս մահլամ
Թև ու թիկունք եարս ուր ա...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Ստուած, ինչպէս ծուխ օրերդս անցան,
Ոսկերքդս, ինչպէս խռիւ, չորացան,
Սիրտս ցամաքեց, ընկայ խոտի պէս,
Ճամբէս մոռացայ ահագին վըշտէս։

Հայս՝ նախատինքն եղաւ օտարի,
Հանդիստս՝ ճամբում հալածանքների,
Լսեցի ցերեկն աղաղակ ու բօթ,
Գիշերը լացի մինչև առաւօտ։

Տըքնեցի, ինչպէս բու աւերակում,
Ինչպէս միայնակ ճնճղուկ տանիքում...
Ստուած, տանջանքից ուժերս հատան,
Մէթէ չըհասաւ ժամը փրկութեան։

Յ. Թորոսեան

ՎԵՀ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Վեհ ազատութեան սէրը չէ մենակ,
Որ ինձ մղում է կռի վառ հանդէս,—
Հրեղէն ոգեն է, վրէժն՝ անյատակ,
Որ սիրտս է այրում ժամը-թոյների պէս...

Ա՜խ, թէ լինէի կայծակ-հրաբուխ
Մռայլ Տաւրոսի ճակատից վիժած,
Պիտի փշրէի, շանթէի պիտի
Թշնամու կուրծքը չար, արիւնախանձ։

Բայց հոգուս խորքում օձեր են վխտում,—
Վրէժի իժեր, սև՜, կծիկ-կծիկ.
—Ու ուռմբ է սիրտս, և պիտի պայթի,
Թշնամու գլխուն նա պիտի պայթի։

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

ԳՈՒՍԱՆ

Գուսան, ինչու է քու ձայնը լուել,
Բամբիռդ ինչու կախած է պատին,
Ինչու է վիշտը քու հոգուն տիրել,—
Էլ հրճուանք չի կայ քու ազնիւ սրտին։

Թէ Աստուած սիրես՝ թող էդ ձանձիրը
Խրմէ փրփրած էս Գողթան գինին,
Նորից ձեռքդ առ խաստուն փանդիռը,
Վերջ դիր հոգեմաշ այդ քու վշտերին։

Պատմէ՛ մեր հայոց նախնեաց կենցաղը,
Սխրալի գործքը հինգերեայ քաջաց,
Հայ պատանեկաց երգն ու խաղը,
Կաթողին սէրը հայ օրիորդաց ...

Գուսանն ալեզարդ իր գլուխը շարժեց,
Մոլորուած աչերն պըտրտցուց չորս դին,
Սրտի խորքիցը ծանրը հառաչեց,
Ու ասաց իր շուրջ կանգնած ամբոխին։

Երգեմ ես, բայց ինչ,—երկաթեայ շղթան,
Որ կաշկանդել է ձեռքըն իմ ազգին,
Թէ ծանրը լուծը և կամ խարազան
Թէ Հայի կրած կեանքը դառնագին։

Աշխարհքում մընաց անէծք, թուք ու մուր
Որ չըլինէին մեր վրայ թափած.
Թշնամու ձեռքում մընաց զէնք կամ սուր,
Որ Հայ արիւնով չըլինէր ներկած։

Ուզում էք երգեմ կողոպտած դեղեցն
Մեր դրախտանքման խըզճուկ հայրենեաց,
Թէ ոտնակոխած, աւերած ժամերն,
Թէ Հայ կուսանը դուշմանէն պըղծած։

Երգեմ բեղմնաւոր հող Հայ մրշակին,
Որ նրա ձեռքից թիզ թիզ են խըլում,
Երգեմ հայերիս անտարբեր հոգին,
Որ տեսնում ենք այս և լուռ ենք մընում։

Երգեմ մեծատանց երեսն անամօթ,
Որ օրնիբուն լոկ իւր վրայ են խորհում,
Փոխանակ տալու մեզ զէնք, թընդանօթ,
Ջանգուլակներով կուրծքն են զարդարում...

Չէ. թող իմ նախնեաց աղնիւ բամբիռը
Թող մընայ յաւէժ լուռ, պատին կախած,
Քանց որ փարատէ ձեր սին ձանձիրը,
Քանի որ Հայի հոգին է թըմրած։



ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելնենք,
Արօր, գուլման մոռնանք, հրացանը առնենք.
Խեղդւած մեր բողոքը յայտնենք զէնքերով,
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով.
Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ.
Ճնշւած Հայի որդիք հարազատ։

Ստրկութեան շղթան պարզ շառաչում է,
Ազատութեան ճնշւած ձայնը հնչում է,
Ազատ լեռներ լինին թող մեր ապաստան,
Եւ ընդարձակ հողեր Հայոց գերեզման,
Մեր կեանք, մեր մահ և այլն։

Ցրված խմբեր հասնեն Զէյթուն և ի Վան
Շտապենք, միանանք, կազմենք խումբ հայկեան,
Հայի ազատութեան պարզենք դրօշակ.
Կեանքը մահով կախուած, դնենք նոր պսակ։
Մեր կեանք, մեր մահ և այլն։

ՀԱՍՕՅԻ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը,
Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
Յառաջ տարէ՛ք արօրը։

Վարը վարենք, ակօս փորենք,
Խոր ակօսներ հողի մէջ,
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Ցորեան դիզենք կալի մէջ։

Կը գայ ձմեռ – մենք վախ չունենք —
Ուրախ կ՛անցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունենք,
Լի և կուշտ է մեր փորը։

Դէ, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը.
Թող չ՛ասեն մեր դրացիքը՝
Ծոյլ են հասօյի եզները։

Ռ ա ֆ ֆ ի

ՀԱՏԻԿ.

Լոյսը բացւում է, շուտ արտը գընամ,
Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի,
Իմ սիրուն հատիկ քեզ նորան պահ տամ
Մինչև օրերը ամրան արևի։

Թաղեմ քեզ, հատիկ, և զարդարս քեզ հետ.
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,
Թող զարդարս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձիր։

Եւ ջերմ ազօթքով Տիրամօր առջև
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծըխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդադէմ։

Բայց թէ այդ շնորհին՝ մեղքերիս համար
Արժանի չլինիմ, ծով կը դարձընեմ
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չըթողնեմ։

Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով
Ծածկիր իմ արտը ողջ ալէծածան,
Նոր այն ժամանակ անուշ շըշիւնով
Տուր ջարդուած սրտիս մի քուն հանգստեան։

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Սրի, գութան, վարի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրուէլ։

Քաշիր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշիր՝ քաշենք, վար անենք.
Ճիպտին արա, քըշիր, հատաղ,
Մեր սև օրին ճար անենք։

Գարտքատէրը դանգատ գընաց,
Քեօխուէն կը դայ, կը ծեծի.
Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,
Կը բարկանայ, կանիծի։

Էն օրն եկան թուջի արին,
Հարկ են ուզում տէրութեան.
Ինչ տամ կոռին ու բէգեարին...
Վարի, վարի, իմ գութան։

Ձեռքս պակաս, ուժքս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։

Արի, գութան, վարի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել.
Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրուէլ։

Ե. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՉԻՆԻԱԾ ՊԱՏՐԱՍՏԻԱԾ...

Զինուած, պատրաստուած Զէյթունի քաջեր,
Սուրբ ազատութեան վկայք անվեհեր,
Վրէժով լցուած առիւծի նման,
Քաջ-քաջ կուռում են Թուրքի դէմ դաժան։

Կեցցէք, դուք միշտ Զէյթունցիք,
Որ պիտ փրկէք հայրենիք,
Դուք Հայաստանի պարծանք,
Մեր կեանքիցն էլ ձեզ կը տանք։

Մանուկն օրօրոցում հանգիստ չէր պառկած,
Խնդրում էր մօրից՝ «բազուկներս բաց»...
«Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,
Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում»...

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք
Որ պիտ փրկէք հայրենիք,
Դուք Հայաստանի պարծանք.
Մեր կեանքիցն էլ ձեզ կըտանք։

Ի՞նչ ես կաշկանդել, քանդիր ինձ, մայրիկ,
Ես կուզեմ կռուել Թուրքի դէմ ճարպիկ.
Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն,
Ես կուզեմ ծծել կաթի տեղ արիւն։

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք
Որ պիտ փրկէք հայրենիք
Դուք Հայաստանի պարծանք
Մեր կեանքիցն էլ ձեզ կըտանք։

ԸՆԿՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐ

Ի զէն հայեր, ի սուր, և ի հրացան,
Տաճկա-Հայաստանից կոչում է մի ձայն.
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,
«Թռէք հայեր, թռէք դէպի Հայաստան»...

Արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս,
Դղրդաց ու թնդաց քաղցը աւետիս։
Հայկայ քաջ զաւակաց առոյգ կըրծքերից
Ազատութիւն հնչեց ամեն կողմերից։

Խումբ-խումբ հայեր դէպի Տաճկա-Հայաստան,
Փրկութեան աւետիք առած ի բերան
Դիմում են ցնծութեամբ իրրև հարսանիք,
Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք։

Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,
Առիւծաբար վրէժ, վրէժ է կանչում,
Արիւնով ներկւում են բոլոր դաշտերը.
Արիւն է լոկ հոսում բոլոր գետերը։

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում
Անթիւ աւար և գանձ հայերին թողնում.
«Յաղթութիւն, Յաղթութիւն», գոչենք միաձայն
«Թշնամին պարտած է, կեցցէ՛ Հայաստան»...

ԵՍ ՀԱՆԵՑԻ ՍՈՒՐՍ ՊԱՏԵԱՆԻՑ

Ես հանեցի սուրս պատեանից
Արտասուքովս օծեցի,
Տրտմաւ անուշ սիրականս,
Երբ վճիռս կարդացի։

Նա երդուեցաւ իմ սրովս,
Չը խնայել թիւրքերուն.
Այս պայմանով աշխոյժ քաջին,
Սուր, հրացան յանձնեցին։

Ասուած սիրէք, հայ աղջիկներ.
Եկէք խորհենք միասին.
Այսուհետև ալ չը սիրենք,
Կռւից փախչող վախկոտին։

Խիստ զզւելի կերպով նայենք
Ոսկու սիրուն մեռնողին,
Համբոյրի տեղ, թոյն կամենանք
Թիւրքից վրէժ չառնողին։

Ոգևորված կրկնեց քաջը
Ո՛ւմ կը սպասենք, վայ մեզի,
Նա հեռացաւ մռնչալով
Ինչպէս կորիւն առիւծի։

Կը դայ դարուն. մենք կը սպասենք.
Նոր կեանք, նոր բաղդ քիւրդի հետ.
Մեր լեռներից պիտի հոսայ
Արիւն՝ ինչպէս վարար գետ։

ԱՇՈՒՂ

Ասի՝ աշո՛ւղ, առ չունդուրբդ, մեզ բան ասա՛ սրտալի,
Կարօտ ենք քու անուշ ձէնին, մի բան ասա՛ սրտալի.
Սրտի խօսք ենք ուզում քեզնից, որ զարթնացնի մեր հոգին—
Ա՛ռ չունդուրբդ, դարդո՛տ աշուղ, մեզ բան ասա՛ սրտալի։

Գիտենք որ դու միշտ տանջւում ես հազար ու մի ցաւերով,
Հայրենիքիդ խոր խոցերը դու համբում ես դարերով,
Չես լրանայ էդ խոցերը արտասունքի ծովերով—
Առ չունդուրբդ, ցաւո՛տ աշուղ, մեզ բան ասա՛ վշտալի։

Լուռ մընալով մեր վէրքերին պիտի չանես դու դարման։
Արար-աշխարհը գիտի՝ չըկայ մեր դարդերին չափ-սահման
Մնջութիւնն էլ նըշան հօ չի՛ մի զովելի յատկութեան.
Ա՛ռ չունդուրբդ, մեզ բան ասա՛—թող խօսքդ ըլնի ցաւալի։

Էդպէս խօսքեր շատ ենք լսել, էլ կըլըսենք անտրտունջ
Մեր չըխօսկան ըլելուցն է, մընացել ենք անտէրունչ.
Լաւ է ազատ լաց ըլնիլը, քանց դարդ տանիլն անմռունչ։

Ասա՛ լսենք, ինչ անենք որ խօսքդդ կ՝ըլնի ողբալի։

Տեսնում ես որ մենք թըմրած ենք, քունն անուշ է մեզ թըլում.
Է՞ր ես դու էլ մեզ բոլորիս մաշող քընից յաղթըլում.
Առ չունդուրբդ, տո՛ւր լարերին, կըրակ վառէր մեր սրտում.
Մեզ ամենից նոր շունչ տուղ մի բան ասա՛ սրտալի։

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՋԱՆԿԻ

Ջանկին եկաւ կռիւ տալով
Խոր քարերը իրար տալով.
Սեան—ծովից մինչև Արազ—
Սրտ այգիներ զարդարելով։

Ջանկի, գիտեմ դարդ շատ ունես—
Բարձր ձայնով բողոքում ես,
Դարդս խառնեմ դարդերիդ հետ—
Արտասուքս ջրերիդ հետ։

Ժայռի գլխին բանտ է շինած
Անուշ եարս մէջը քնած,
Հարուստ Զանկի, ոյժդ ցոյց տուր,
Ափիդ կանգնեմ եարիս ինձ տուր։

Խիտ մազերս պարան հիւսեմ,
Ժայռի գլխից վար քաշ անեմ,
Կամար ունքերս մէջքիդ կապեմ
Քաղցր եարիս կամուրջ կապեմ։

Էլ մի վազիր դէպի յառաջ,
Կուրծքդ դէմ տուր ժայռի առաջ.
Ճիչ արձակիր՝ ժայռը ղողայ,
Բալքեամ բանտը ջաձիս թողայ։

Թէ չ'հասայ իմ մուրազին.
Սև դիակս տուր Արազին.
„Սև աչերը„ կեանքը զոհեց—
Առանց եարի ապրել չուզեց...

ԹՈՐՈՍ

ԱՇՈՒՂ

Աշուղի լեզուն դրբիստն է ասում ամեն մի բանին,
Իր անմեղ հոգին օսկով չի ծախում նա մամոնային.
Միշտ մէկն է ասում նա՝ թէկուզ եարին, թէկուզ դուշ-
մանին,
Չի վախում խօսել դրիստն՝ առաջի ահեղ ատենին։

Աշուղն ամենի խաթրին գլուխը դուրբան է դնում.
Տրխրած որ տեսնի՝ ինքն էլ նրբա հետ անկեղծ է տխրում.
Ծիծաղողի հետ ինքն էլ է իսկոյն ուրախ ծիծաղում,
Հաղով ծնել է մօրը արդանդէն, հաղով է մեռնում։

Աշուղը թէկուզ եաշովքն ըլի հարուր տարեկան,
Նրա միամիտ պարզ հոգին մընում է միշտ մանկան։
Խօջա ու քեասիբ, տէր ու ծառայ են նրբա սիրական,
Հաւասար մարդ են՝ թէկուզ ջրիստոնեան, թէ մահմե-
տական։

Վառ արեգակը ամենի համար լուս է ու պայծառ,
Միայն աշուղին ցերեկւայ մէջն էլ մութ է ու խաւար,
Մութն է աչքերը, բայց լուս է հոգին, սիրտն է բոցավառ,
Քանց գրբագէտէն լեզու ունի նա անուշ ու ճարտար։

ԳԱՄԱՌ—ԲԱԹՈՊԱՍ

ԱԶԻԶ ՄԷՐԻԿ

Ազիզ մ'ըրիկ, քեզի թոզի,
Դարդ ունէի, դուրս ընկայ,
Սուրբ վաթանիս ժողովրդի
Ձէնը կանչեց, դուրս ընկայ։

Դուման սարեր, դարդլու սրտեր,
Դարդ ու դուման մեր վաթան,
Ա՜խ, գլուխս քու ուղուրին
Ա՜խ, մեր անուշ մէր-վաթան...

Էյ, Սիս-Մասիս, ձեզի մեռնիմ,
Իմ Սիս-Մասիս, ջան տղերք.
Դուք տասի չափ—հազարի չափ,
Ձեզի մեռնիմ, ջան տղերք։

Առիւծի պէս առուն կուգայ
Բաշը տուած քարերին,
Առիւծի պէս, հայ-ախպերանք,
Վո՜ւհ, վրայ տանք դուշմընին։

Մէկ սիրտ դառնանք, բիւր սուր դառնանք,
Ջարդենք, փշրենք դուշմընին.
Ջան, տղերք ջան, զարկենք-զարկուինք,
Մեր-վաթանի ուղուրին...

ՀԱՑ—ԳՈՒՍԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

Հազար ինը հարիւր չորս թուականին,
Տաւրոսի լեռներում ժայթքեց նոր կրակ,
Թնդացին լեռները մայր Հայաստանին,
Փայլեց հերոսութեան կարմիր դրօշակ։

Բանտից, ու կապանքից ազատուած ոմանք,
Անւանի Սասնոյ մէջ որոնեցին կեանք.
Տեղական քաջերից գտնելով յարգանք,
Հանդստանալ ուզեցին մէկ ժամանակ։

Հայ քաջերը աւելացան օր—օրի,
Նրանց թիւը հասաւ մինչև հարիւրի.
Ամենքն էլ միասիրտ և մի հոգի,
Ձինավարժութեան մէջ հմուտ ընդունակ։

Ձինուած ու պատրաստուած ողջը ժրաջան,
Ունէին հեռաձիգ բանուկ հրացան.
Երդում արին Սասնցոց հետ միացան,
Կազմեցին հայկական մի փոքրիկ բանակ։

Բազմազէտ Անդրանիկը բազմաշահ,
Եղաւ կառավարիչ հայ զօրքին անահ.
Չորս գլխաւոր քաջեր ընտրեցին թիկնապահ,
Մուրատ, Հրայր, Վահան, և Սեպուհ Արշակ։

Փոքրիկ ընդհարումներ եղան թէպէտև,
Գործը չմեծացաւ, անցկացաւ թեթև.
Ինքնապաշտպանութեան տին ձև,
Թուրքերի մէջ բարձրացաւ, ճիչ աղաղակ։

Այս լուրը Սուլթանի ականջին հասաւ.
Հայոց պատրիարքի վրայ նեղացաւ,
Սպառնալով այսպէս հրաման տւաւ.
Խրատիր հայերիդ ուղարկիր կոնդակ։

Պատրիարքը պատասխանեց խոր հոգուց,
Սաւ ես ոչինչ եմ այսօր, թէ էրուց.
Հեղինակութիւնս ընկել է վազուց,
Քաղցր խօսքը նրանց թւում է ներհակ։

Սուլթանը այլայլեց տխուր, սրտմտած,
Տակն ու վրայ եղաւ սատիկ ցաւ զգաց
Իւր նախարարներուն ասաւ բարկացած,
Բիթլիսի վալուն տալ հրովարտակ։

Վալին Տիրոջ հրովարտակը կարդաց,
Հայերուն կոտորել հասկացաւ, զգաց.
Առաքելոց վանքի վանահօրն ասաց,
Արի գնա Սասուն, եղիր պատուիրակ։

Գնա խրատէ քու ժողովրդին,
Վնաս չհասցնեն թուրքին ու քրդին.
Ասա չհետևեն այլոց խորհրդին,
Ողջ Սասունը կդարձնեմ աւերակ։

Վարդապետը գնաց, դատարկ ետ դարձաւ.
Նրա քարոզներուն մի լսող չեղաւ.
Անապարեց վալին շատ զօրք մօտ արաւ,
Խառն ի խուռն քիւրդ ու խուժան ելուզակ։

Մանը, խոշոր թնդանօթներ, մօտ քսան,
Ռազմամթերքը առատ բաւական.
Թուրքաց զօրքի թիւը կլինէր այսքան,—
Քսան հազար ձիաւոր ու հետևակ։

Առիւծ Գէորգ Չաւուշ, Կայծակ ու Վահան,
Աւետիսը, խմբով հասան օգնութեան.
Կանգնեցին թուրք զօրքի դէմը յանդիման,
Հայոց կտրիճները անվախ համարձակ։

Վալին ասաց Անդրանիկին. ով տխմար,
Անփորձ ճնճղուկի պէս թակարդն ընկար,
Չգիտես ում դէմ ասպարէզ մտար.
Ես բազէ եմ, դու մի չնչին կաչաղակ։

Անդրանիկն ասաւ. հոտած խելքի ծով,
Խօսքերդ քո գլխիդ կը բերեմ խառով.
Բուրդդ բարեբարը կհանեմ շուտով,
Անեղիս մէջ կառնեմ քեզ որպէս բամբակ։

Վալին ասաւ. Ազրաիլն եմ ես հիմայ,
Իսկապէս քո հոգիդ առնելու եկայ.
Ո՞ւմ վրայ ես դրել յոյսդ ինձ ասայ
Ո՞վ դու ամբարտաւան, ըմբոստ աւազակ։

Անդրանիկն ասաւ. շատ բարձրամիտ ես,
Գիշակեր բորենու պէս պարազիտ ես.
Անզէն խեղճ հայերին կոտորել գիտես.
Քաջերու մօտ դու կը դառնաս նապաստակ։

Վալին ասաւ. արի անձնատուր եղիր,
Էսիր թագաւորիդ, զէնքերդ վար դիր
Ողջիդ կդարձնեմ ես հոգ ու մոխիր,
Մէկ ամիս անդադար կարձակեմ գնդակ։

Անդրանիկն ասաւ. լսիր ով փաշայ,
Մեզ համար մեռնել կայ՝ յանձնուել չկայ.
Արա, մի խնայիր, ձեռքէդ ինչ կուգայ,
Շատ ենք լսել, տեսել մենք քամու տոպրակ։

Վալին ասաւ. թող գայ ամբողջ աշխարհը,
Չի կտրի օսմանեան ազգի լարը,
Փոքրիկ ուժով կուզես շրջել մեծ սարը,
Գլխիցդ անցել ես, խեղճ հայի զաւակ։

Անդրանիկն ասաւ. Դաւթի ճժերը,
Միթէ դու չես լսել Սասնոյ գժերը,
Շատ սարեր են շրջել փոքրիկ ուժերը,
Բռնակալին Աստուած ինքն է հակառակ։

Վալին տեսաւ, չեն խոնարհուում հայերը,
Իրենք անվախ և հատու են զէնքերը,
Խրախուսեց, առաջ մղեց քրդերը,
Բայց հայերուց կերան կատաղի ապտակ։

Չորս ամիս շարունակ պատերազմ եղաւ,
Դղրդաց սար ու ձոր, գոռաց, թունդ ելաւ,
Թուրքաց կողմից երկու հազար մարդ ընկաւ,
Հայերը ունեցան քսան նահատակ։

Վալին փախաւ, զօրքն էլ իրան հետեւեց,
Անարգւած անպատիւ դէպի Մուշ չւեց,
Իջաւ դաշտը, անդէն հայոց ջարդ տւեց,
Տեսաւ Սասնեցոց հետ չի լինի կատակ։

Հայերն էլ դիրքերը թողին հեռացան,
Որ թուրքերը անդէն հայոց ջարդ չտան.
Ցրւեցին ամենը մի տեղ պահւեցան,
Մինչև որ կծագէ մի նոր արեգակ։

Հմուտ կառավարիչ, խելահաս վարպետ,
Մահից ու կրակից նա չկեցաւ յետ.
Կեցցէ Անդրանիկը ընկերներու հետ,
Բոլոր աշխարհի մէջ ստացան հռչակ։

Ջիւան ուժեղի մօտ եթէ խեղճ լինի,
Տկարին օգնելը դժւարը կը թւի.
Տայ Աստւած որ հայոց թեղն էլ էրնւի
Անձրև չդայ, քամին փչէ աջողակ։

ՊԱՆԴՈՒԽՏ ԱՌ ԿՈՒՆԿ

Կռունկ, ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս.
Մի վազեր, երամիդ՝ շուտով կը հասնիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

Թողեր եմ ու եկեր մլքերս ու այգիս.
Քանի որ ահս կ'անեմ, կուքաղւի հոգիս,
Կռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

Աստւած, քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ.
Ղարիպին սիրտն է խոց, ջիկերն է վէրէմ.
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ։
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

Գրքեր եմ մէջ թրղթիս, թէ հոս մընացի.
Օրիկ մի օրեր դաշերս չբրացի.
Սիրելիք, ձեզանէ կարօտ մընացի.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէդպիր.
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չրտւիր, ելար գնացիր.
Կռունկ, մեր աշխարհէն գնա, հեռացիր։

ՏԱԼԻՈՐԻԿՑԻ ԿՏՐԻՃ

Տալորիկցի կտրիճ եմ խորթ,
Քաղքցու պէս չեմ թուլամորթ.
Սարի զաւակ, քարի որդի,
Հին քաջ Հայոց եմ մնացորդ։

Տալորիկցի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր թուրքի առաջ.
Քարոտ լերանց ես ազատ լաճ,
Չեմ տեսներ՝ ոչ արօր, ոչ մաճ։

Երբոր բացի աչքս այս աշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար.
Մինչև փակեմ աչքս ի խաւար,
Պիտ չ'կոխէ հոս ոտք օտար։

Իմ պապ ծնաւ գիս պալու ծոց,
Ինձ ընկոյզի կոճղմ եղաւ օրոց,
Տկլոզ ծնած, մեծցած տկլոզ,
Դէմ արևու, սաստիկ հողմոց։

Ոտքս բոբիկ, սիրտս միշտ բաց,
Ի՞նչ փոյթ՝ թէ քոյրս ալ մերկ մնաց,
Ինձ մօտ մէկ է արև, բուք, ցուրտ,
Բնաւ չէ իշխեր վրաս թիւրք, քիւրտ։

Ցորենի տեղ կուտեմ կոբեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ,
Շինեմ փէտատ, խոփ, խաճրկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ ազատ։

Հարստութիւն, ուսում, հանճար,
Պատիւ և փառք չեն ինձ համար,
Բաւ է՝ ունիմ ճաթ, թուր, խանճար,
Բնաւ՝ չէ իշխեր վրաս օտար։

Զէնքս է միակ իմ խաղալիկ,
Կ'ատեմ հանդարտ կեանք խաղաղիկ,
Կը սիրեմ որս, կռիւ աւար,
Կսպասեմ երբ ընկնի հաւար։

Գիշեր զէնքս վրաս քնեմ,
Երազիս մէջ կռիւ կընեմ,
Դուելը ինձ մօտ խաղալ է,
Կուով մեռնելն ինձ հալալ է։

Կռի մէջ մեռաւ իմ պապ,
Այդ կերպ մահն է անուշ մրափ,
Ես ալ կուզեմ մահ մէջ կռի,
Որ իմ անուն անմահ զրի։

Այս սարերը անմատչելի,
Իմ քաջ նախնիք երբ ընտրեցին,
Ըսին,—ազատ որդոց որդի,
Քաջանց սերունդ թող հոս ապրի։

Եւ իմ խելօք ջոջ պապ Յարէ,
Ատուած հոգին լուսաւորէ,
Ինձ կըսէր միշտ,—ազատ ապրիր,
Մի ծռեր վիզ, հարկ մի վճարիր։—

Տալորիկն է սև-սև սարեր,
Խոր, մութ ծործորք, սեպ-սեպ բարեր,
Վերև ջուխտակ ծեր Մարաթուն.
Հոգիս մատաղ մեր Մարաթուն։

Մեզմով պարծի այսօր Սասուն,
Մենք ենք խրախոյս Հայոց նկուն,
Տալորիկ սար, ժայռոտ Զէյթուն,
Տան իրարու ազատ ողջոյն։

ԱՐԱԶԻՆ

Մեր սարերէն, մութ ձորերէն
Պղտոր-պղտոր կուգաս, Արազ.
Մեր սրտերէն, խոր աչքերէն
Արուն քամեր, կերթաս, Արազ...
Մեր սարերէն, սև ձորերէն
Ոլոր,-մոլոր կուգաս, Արազ.
Ա՜յ սարեր, ջան սարեր,
Ալմաստի սարեր...

Քանի հարուր-հարուր տարի
Մեր սրտերէն ելեր, կերթաս.
Մեր դարդերով, մեծ ցաւերով
Խոլոր-մոլոր կերթաս, Արազ...
Մեր սարերէն, մութ ձորերէն
Մեր ցաւերով կերթաս, Արազ.
Այ սարեր, Հայ սարեր,
Ջան անուշ սարեր...

Ու դարերով, մեր դարդերով
Էս աշխարհի քար-ապառաժ,
Անգութ խղճին միշտ դարնելով
Տխուր-տրտում կերթաս, Արազ...
Մեր սարերէն, խոր ձորերէն
Արուն քամեր, կերթաս, Արազ.
Այ, սարեր, ջան ձորեր,
Ջաւահիր սարեր...

Ա՜խ, աշխարհը անխղճմտանք,
Քեզ չի գթայ, ազիզ-Արազ,
Քու բողոքին, քու մորմոքին
Չի էլ լսի, արնոտ Արազ...

Մեր սարերէն, մութ ձորերէն
Տխուր-տրտում կերթաս, Արազ,
Այ սարեր, հայ ձորեր
Զմրուխտի սարեր...

Դուն էլ, Արազ, մեր արունով
Էս աշխարհի խղճի վրայ
Դէզ-դէր, դարձիր սև-դառն ծով.—
Թոյն ու արուն, ազիզ-Արազ.
Մեր սարերէն, մեր սրտերէն
Արուն քամեր, կերթաս, Արազ.
Ա՜յ սարեր, Հայ-սարեր,
Ջան անուշ սարեր,
Ալմաստի սարեր...



ԹՈՂ ԿՈՐՉԵՆ ՏԱՃԻԿՆԵՐԸ

Թող կորնչեն տաճիկները
Հայաստանի սուրբ հողէն,
Իսլամական անարգ լուծը
Թող ջնջի Հայաստանէն։

Բաւական է որքան նոքա,
Հայի արիւն ծծեցին,
Հայի ջանքով, աշխատանքով
Պետութիւն պաշտպանեցին։

Հայի հացը, հայի ջուրը
Բաւական է տաճիկն ուտէ,
Եւ գարշելի պիղծ բերանով,
Հայութիւնը անարգէ։

Աչքերի տեղ աչքեր հանենք,
Ատամի տեղ ատամներ.
Մեր մէկ հաւը գողացողին
Ամբոջ տունը թալանենք։

ՍԵՐԼԻՄՋԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Վէրքերով լի ջան ֆիդայ եմ,
Թափառական տուն չունիմ.
Եարիս փոխարէն զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունիմ։

Արնոտ երկիր, սուգ ու շիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից,
Տանջւած հայրենիքի սէրը,
Չը վախեցուց ինձ վտանգից։

Ես կոչւեցայ ջան ֆիդայի,
Դարձայ զինւոր գաղափարի
Թող իմ թափած արեան շիթերը,
Օրինակ դառնայ հայ զինւորի։

Մակեդոնեան իմ եղբայրս
Իմ խաչովս պսակւեց,
Եղբայրական սիրուն զէնքով
Գաղան Սուլթան խորտակւեց։

Ահա հանգիստ հող կմտնեմ,
Յոյսս դուք էք, ընկերներ,
Շարունակէք մեր սուրբ գործը
Դաշնակցութեան վեհ քաջեր։

Կախաղանից երբ որ քամին.
Ինձ տարբերեց ճօճալէն,
Յիշէք Պետրոս Սերեմջեանին,
Թուրքից վրէժ դառալէն։

ՍԵՒ ԱՄՊԵՐԷՆ

Սև ամպերէն, ամպի սրտէն
Արտասունքի պէս թօն կուգայ.—
Ա՜խ, ուր կ՚երթայ իմ սև ճամբէն
Ա՜յ բախտ, եարաբ վերջ չը կայ...

Եարաբ դարդլու, չոր-գլուխս
Ո՞ւրտեղ պիտի քուն մտնի.—
Սիրած, կարօտ սրտի վրայ,
Թէ չօլի մէջ ամայի...

Ա՜խ աչերս ով պիտ՝ ծածկէ,—
Ազիզ մէրս համբուրով,
Թէ ձունն ու հող քամին բերէ
Սև-սհակի վույ-վույով...

Ս. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԳԷՈՐԳ ՉԱՐՈՒՇԻ ԵՐԳԸ

Թուրքը լսաւ անունդ, Չաւուշ
Դէմքդ սիրուն, լեզուտ անուշ.
Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար.
Թշնամեաց դարձուցիր ապուշ.
Սասունն է քո ապաստան.
Վրէժն է քո դատաստան։

Հայոց համար սպարապետ.
Անդրանիկին ընկեր վարպետ,
Սասունը կանգուն պահեցիր,
Օգնողն է քեզ սուրբ Կարապետ
Սասունն է քո ապաստան,
Վրէժն է քո դատաստան։

Կոտորեցիր քանիցս վաշտ.
Թուրք արիւնով ներկեցիր դաշտ.
Անվախ հերոս Թուրքաց դէմը,
Մինչև վերջը մնացիր անհաշտ։
Սասունն է քո ապաստան.
Վրէժն է քո դատաստան։

Անվախ հերոս ես ճշտապէս,
Հայք պիտի յիշեն մշտապէս,
Քաջաց քաջն ես Գէորգ սարդար
Վարդանի տիպ ես իսկապէս։
Սասունն է քո ապաստան.
Վրէժն է քո դատաստան։

ՆՊԱՏԱԿԻՍ ՀԱՍՆԵՄ ՄԻԱՅՆ

Նպատակիս հասնեմ միայն,
Թող գիս հանեն կախաղան.
Կախաղանէն խեղդուկ ձայնով
Պիտի գոչեմ ահա, Հայաստան։

Ա՜խ, Հայաստան, սիրտս ու հոգիս,
Քեզ նուիրեմ ընդունէ.
Թէ կարելի, թող ես մեռնեմ,
Թաք Հայաստան ոտքի ելնէ։

Էնոր սիրուն բանտն ալ մտնեմ
Պատատ է այն ինձ համար,
Ոտք ու ձեռս շղթայակապ
Երջանկութիւն է ինձ համար։

Թէ մինչև իսկ աքսորւիմ ալ
Թափառական գտնէ գիս բախտ.
Հայաստանի սիրոյն համար
Փշոտ վայրեր կըլլան դրախտ։

ԱԽ ՄԵՐ ՍԻՐՏԸ

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չըտեսանք
Վա՜խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ՚իմացանք։

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն
Աշխարհի ճոխ սեղանից,
Մենք աշխարհի խորթ-տղերքն ենք,
Մեզ փայ չը կայ աշխարհից։

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ
Քարից-հողից հաց քամէ.—
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, վայելէ...

Խեղճ աղքատը դառը դատի—
Դաղարկ նստի... Է՜յ, աշխարհ,
Էլ ինչու ես քարը թողնում
Քարի վրայ, քար-աշխարհ...

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չը տեսանք.
Վա՜խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ՚իմացանք։

Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՄՇԵՑՈՒ ՄՕՐ ԵՂԵՂԱՆՔԸ

Թիփի, բօրան մութ գիշերին
Կը պարուի ֆէդային,
Պատռոն—տաշին խաչփակ թալած
Ձեռքին թուանք ու սին։

Ա՛խ, ձեզ մատաղ, ջան ֆէդայիք.
Ձեր մէր ձեզի թող մեռնի.
Մշու սուլթան Սուրբ Կարապետ
Ձեզի քօմակ թող եղնի։

Գուք վախցուցիք քուրդ անօրէն,
Քշիք մեր սար ու ձորից,
Քաֆրը քրդի աչք վախեցաւ
Ջան ֆէդայու գուլուլից։

Ա՛խ ֆէդայիք, ձեր սատաղէն
Ձեր խէտ տարէք գիմ տղէն
Ձեր խէտ մեռնի, ձեր խէտ ապրի
Ազգին մատաղ գիմ տղէն։

Թող դէն թողնի արօր ու մաճ
Իմ մէկ ու ճար ազիզ լաճ,
Քիչ թուանքի խէտ թող խաղայ
Էլ թող չրտայ քրդին խարճ...

ՁԱՐԵԽ-ՖԱԼԱԿ

ՁԵՑՆ ՏԻՐՈՒ ՈՎ ԾՈՎԱԿ

Ձայն տուր, ով ծովակ, ինչու լռումես.
Ողբակից լինել չկամիս զժբախտիս։
Ճարժեցէք, զեփիւռք, ալիքը վէտ վէտ.
Խառնէք արտասուքս այս ջրերիս հետ։

Հայաստանի մէջ անցքերին վկայ,
Սկզբից մինչ այժմ, խնդրեմ ինձ ասա.
Մի՞թէ միշտ այդպէս, կը մնայ Հայաստան
Փշալից անապատ երբեմն բուրաստան։

Մի՞թէ միշտ այդպէս ազգը խղճալի,
Կը լինի ծառայ օտար իշխանի։
Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին,
Անարժան է Հայն և Հայի որդին։

Արդեօք գալու է մի օր, ժամանակ.
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ.
Եւ ամեն կողմից պանդուխտ Հայազգիք
Դիմել դէպ Իրեանց սիրուն հայրենիք։

ՐԱՖՖԻ

ԲՈՂՈՔ

Ծխում է խունկը աւեր տաճարում
Սուրբ խաչելութեան պատկերի առաջ,
Տառապեալ հօտը հովւին է կանչում
Արիւնաշաղաղ, մերկ, լալահառաչ։

Իսկ տաճարի մօտ մայրեր, այրիներ
Գերեզմանատան նիրհը խանգարած,
Հողակոյտներն են արցունքով ծածկել
Եւ դարձեալ օրհնում քո կամքը, Աստուած։

Բայց ո՞ւր ես Աստուած, ինչո՞ւ չես լսում
Հալածեալ հօտիդ աղերսը արդար,
Որ քո սուրբ անուան համար այս կեանքում
Արիւն արցունք է թափել դարէդար։

Նա, որ ամէն բան զոհել քեզ համար
Վանքեր, տաճարներ կառուցել շքեղ,
Որ իր թանկ որդոց արիւնով արդար
Ներկել բո անուան կուռ դաշտն ահեղ։

Եւ այսօր անգամ նեղ ճգնաժամին
Երբ հալածւում է անսիրտ, չարաչար,
Կրկին քո դուռն է հայցում լալագին
Արհամարհելով մարդիկ և աշխարհ։

Բայց գիտցիր, Աստուած, որ քո ստեղծած
Ամենաանգութ ոճրագործն անգամ,
Գիտէ յետ առնել սուրը չներկած
Արտասուող զոհերի արիւնով անպարտ...

Բայց որոնց քայլը դու անիծել ես
Վաղանցուկ կեանքի այս տանջարանում,
Եւ որոնց համար տանջանքով պէս պէս
Դժոխք յարդարել անտի աշխարհում...

Իսկ թէ քո կուրծքը ծարաւի է դեռ
Լծիդ տակ հեծող ստրկի արեան,
Ահա պատրաստ եմ արձակիր վճիռ
Եւ դատապարտիր ինձ անմահութեան։

Թաղիր ինձ ողջ ողջ դերեզմանի մէջ
Եւ շրջապատիր անմահ որդերով...
Բորբոքիր խարոյկ գեհենու անշէջ
Ուր նետիմ անվախ, այրիմ դարերով։

Եւ կամ երկնքի բարձրում անկործան
Խաչ անկիր ահեղ փշերից հիւսած,
Ուր ես բևեռած անվերջ, անվախճան
Քաւեմ մեղքերը հոտիդ... չգործած։

Կամ այլ տանջանքներ, որ աստուածային
Միտքը կարող է երևակայել...
Լոկ թէ դորանով հալածեալ հոտին
Մի անկապտելի ազատ կեանք գնեմ։

ՎՏԱՐԱՆԴԻ

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Հազար բարով, հպարտ սարեր,
Թև եմ առեր, ձեզ կուգամ.
Արծիւների ձէնն եմ լսեր—
Արծիւներին դէմ կուգամ...

Իմ հայրենիք կապուտ սարեր,
Թշնամու շաքք ձեր բոլոր.
Դաշտ, անապատ, արնոտ գետեր,
Արագը խոր ու ոլոր...

Հազար ձէնով, հազար սրտով
Արծիւների հետ կուգամ,
Հողիդ մեռնիմ հազար սրտով,
Իմ հայրենիք, մէրիկ ջան...

Բարով ձեզի, դար ու դուրան,
Բարձրիկ սարեր ու քարեր,
Հազար բարով հով ու դուման,
Ծովակ, ծմակ ու ձորեր...

ՀԱՅ-ԳՈՒՄԱՆ

ԵՐԵԻՆ ԻՋԱՒ

Արևն իջաւ սարի գլխուն,
Դար ու դաշտում լոյս չը կայ.
Հաւք ու թռչունք մտան խոր քուն,—
Ա՜խ, ինձ համար քուն չը կայ։

Լուսնակն ընկաւ երթըկից նեռ,
Կշեռքն ելաւ երկնքում,
Զով հովերն էլ մըթնշողէս
Աստղերի հետ են զրցում։

—Սիրուն աստղեր, անուշ հովեր,
Եարըս ո՞ւր ա՛ էս գիշեր.
Պարզ երկնքի նշխուն աչեր,
Եարիս տեսա՞ք էս գիշեր...

Լուսը բացաւ, դուռը բացաւ,
Ամպ ու զամպ է ,—թօն կուգայ.
Ալ-ձին եկաւ, անտէր եկաւ,
Ա՜խ եարս ո՞ւր ա՛, տուն չի՞ գայ...

ՊԱՐԶԻՐ ԱՂԲԻՒՐ

Պարզի՛ր աղբիւր, պարզի՛ր քեզնից ջուր տանեմ.
Պարզի՛ր, պարզի՛ր, բէկի տղին ջուր տանեմ։

Աղբիւր, գիտես քիւրդը մեզի ի՞նչ կանէ,
Կը կողոպտէ, կը չարչարէ, կսպանէ։

Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,
Մեր սեփական թագաւորներն ունէինք։

Գահ ու փառքից, ազատ կեանքից զրկուեցինք
Արիւնարբու թշնամու ձեռք մատնուեցինք։

Դէհ, շո՛ւտ պարզի՛ր բէկի տղին ջուր տանեմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, խան-Մուրադին ջուր տանեմ։

ԿԱՐՕՑԻ ՑԻՇԱՑԱԿԻՆ

(Արիստակէս Զօրեան)

Զարկ, զարկ, ա՛յ վարպետ, շէկ կայծեր թռցուր
Կռանէ սալրդ, ձև տուր մետաղիդ.
Քամի տուր փուքսիդ, թոքերդդ ուռցուր,
Արծարծէ բոցը հանգած հրնոցիդ։

Ժանգոտ, բիրտ երկաթը «օճախը» խրէ
Անձև երկաթիդ բերան չինէ սուր,
Դժոխքի բոցով բարկ մետաղը ճրզմէ
Ձև տուր պողպատին, կոփէ, փայլեցո՛ւր։

Զար բախտն երկաթին կապեց մարդուս կեանք,
Երկաթն է վճռող սև ու կարմիր օր.
Առանց երկաթին արդարն անվրտանգ
Ե՞րբ անցաւ երկրիս ուղին նենգաւոր։

Այդ նենգ ուղիին փշոտ ու մթին
Յատակագիծը արիւնն է գծած.
Խեղճ ու զբկեալին, ստրուկ-գերիին
Իրաւունք վճռող լոկ սուրը մնաց։

Երկաթն երկաթին կը փշրէ մէկ օր,
Եսն ու բռնութիւն կը դառնան դերի.
Ձուռ կուգայ աշխարհը, դերին դարևոր
Կը փոխուի տէրի, և ոխը՝ սէրի։

Ուժով զարկ, վարպետ, կայծերդ թռցո՛ւր,
Հանգած հրնոցիդ մէջը կատաղի
Անեղ վրէժի դրժոխք բրբընկցուր,
Որ շուտով փշրես շղթադ ստրկի։

ԱՎՕ

ՔԵՕՌ-ՕՂԼԻ

Անկա՛ջ արէք, թարիֆ անեմ Քեօռօղլի քաջ արարքը,
Քեօռօղլին շատ են սիրել մեր պապերը ու մեր հարքը.
Ո՞վ չըգիտի Քեօռօղլի անմահական գործքն ու բարքը,
Մինչ էս օրըս աշուղները մէջլիսի մէջ նըրա վարքը
Պատմելով՝ մոռացնում են լըսողներուն դիվ աշխարքը։
Մայիսի բըլբուլ էին նըրա չունդուրի անուշ լարքը,

Նրբա նետը դանադ ունէր՝ դուզ հասնում էր մինչ ամ-
պերը,
Նրբա թուրը ադամանդի՝ կըտրում էր արկաթները,
Հայելու պէս պրսպրդում էր նրբա հատու սուր խէնջարը,
Ի՞նչ է ժանգը՝ չէին խաբար նրբա զէնք ու զրահները,
Մինչ էս օրրս սարսափում են Սուլթանի խեղճ նոքարները.
Յիշելով Քեռօղլի անցած գընացած արարքը։

Նրբան անկեղծ սիրում էին Հայը, Թուրքը ու Պարսիկը,
Թէ դուշմանը, բարեկամը, ջահիլ տղէն ու աղջիկը.
Սրխրագործութեանը նրբա ու մեծանձնութեան խաբրիկը
Բարձր Եալբուզ սարից բռնած՝ անցել էին մինչ Հնդիկը,
Հազար հոգի անջաղ ունէր նրբա հեծուոր քաջ գընդիկը,
Աշխար կ՚անէր տակնուվրայ, թէ չէր խաւրել շուտ աստղիկը։

Անկաջ արէք քօռ աշուղիս՝ ձեզ հրաշալի բան եմ ասում,
Ջահէլ տըղերք, լաւ ուշ դըրէք՝ զարմանալի բան եմ ասում.
Սիրուն կուսանք՝ լաւ միտք դըրէք՝ արտասուալի բան եմ
ասում,
Յարգոյ ծերեր, ինձ լըսեցէք՝ ձեր պապերու բանն եմ ասում,
Հայ քրիստոնեայք, ազգի իշխանք, խորհրդաւոր բան եմ
ասում,
Ուշքով միտքով անկաջ դըրէք՝ ձեզ ամենիդ բան եմ ասում։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ.

ՂԱՒՐԲԱԹ-Ի Ց

Խուլ հառաչանք, բեկ-բեկ ձայներ են ամէն կողմ
հնչըւում...
Անցորդն է այս ... աղօ՞թք է նա, արդեօք, ջերմ-ջերմ
սրմնջում.
Թէ անէծք է դառն սրտով կարդում պատած խաւարին,
Կամ չլինի՞ չար ոգին է բռնել նրբան ու տանջում...

Սակայն ոգին իւր զօրութեամբ զուցէ դողար նրբանից,
Գուցէ յըղին անիծելով՝ վիժէր պտուղն արգանդից,
Եթէ անգամ միայն նայէր նրա դէմքին թիւնալից։

Տիեզերքի ամբողջ թոյնը նա ժողուել է երեսին,
Կարծես մարտի է կոչելու չարախորհուրդ Իբիսին.
Եւ կարծես թէ ան ամպերի բիւր սլաքներ կայծակի
Նա ուզում է ողջ աշխարհի գլխին զարկել շեշտակի։

Զանթ ու կրակ է դուրս ցայտում իւր աչքերից
Եւ ջլապինդ բռունցքներ է երկնցընում երկընքին։
Բօայի պէս գալարուելով հանած բերնից չար լեզուն,
Նա ոռնում է և սուր ձայնը ձգձգում է շատ հեռուն...

«Ո՜վ զօրութիւն, որ ամենքը քեզ կոչում են Աստուած,
Որ աթոռդ եթերից վեր, երկնքումն ես հաստատած,
Որ բիւրաւոր հրեշտակներ խոնարհւում են առաջիդ,
Սա՛, արդեօ՞ք, մեր հեկեկանք հասնում են քո ականջիդ։

Այդքան բարձրից տեսնում ես դու արիւնազարդ այս լճեր,
Կամ լսում ես որդեկորոյս, սրտակոտոր մօր ճիչեր։
Չկա՜ս, չկա՜ս, այո՛, չկա՜ս, չեմ հաւատում, որ դու կաս.
Եւ յիմար են, որ ասում են, թէ զօրութիւնդ է անհաս։

Տանջեց, խաչեց դաժան քիւրդը բազմաչարչար Հայերին
Սակայն անհաս զօրութեամբդ ճրբ օգնեցիր տրկարին։
Հայի ձայնը դղրդալով՝ հասաւ մինչև բեռներ,
Կայծակի պէս՝ այրեց, չանթեց խղճահարուած շատ սրտեր.

Իսկ ճրբ սիրտդ զէթ մազի չափ տեղից շարժուեց գայրոյթից.
Ե՞րբ բոց ու հուր դաժան քրդին պատիժ տուիր երկնքից ...
Իմ բազմանդամ ընտանիքից ինձ թողեցիր մի որդի.
Թէ նրան էլ զոհ ես տալու կուսածարաւ լիրբ քրդի,
Թող սատանան զինէ ինձ բիւր նիզակներով դժոխքի,
Որ կործանեմ ես դռները քո անարդար երկնքի։»

Ս.ՐԱՄՍԵՍ

ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Հին հերոսներն ինչպէս մեռնող արևներ,
Անյայտացան հորիզոնից ռազմական.
Կռւի դաշտում մի պահ տիրեց սև գիշեր...
Ազատութիւն ու իրաւունք սուգ հագան։

Զվհատուենք, վառ արշալոյս հայկական
Բիւր երփներանգ արևներով կը ծագի։
Նորա համար այնքան արև մայր մտաւ,
Որ զարդարն մեր մեծ այդը նոր կեանքի։

Եւ յարդարէն ծիրանիով շողշողուն,
Լոյս առագաստն երրորդութեան ճշմարիտ,
Ազատութիւն, իրաւունքի և սիրոյ,
Որոնք տին մեզ ազատ կեանք ու տաք սիրտ։

ՎԵՐՋԻՆ ԲԱՐԵՒ

Մնաս բարև, իմ հայրենիք,
Իմ մանկութեան օրօրան.
Քեզ պաշտել եմ իմ վառ սրտով,
Եւ կպաշտեմ յաւիտեան։

Թէև բախտը խլում է ինձ,
Նուիրական քո գրկից,
Բայց երբէք չի կարող ջնջել,
Սուրբ անունդ իմ սրտից։

Ուր էլ լինիմ, ուր էլ ապրիմ,
Թէկուզ օտար երկրի մէջ,
Սիրել եմ քեզ և այդ սէրը,
Կմնայ անխախտ և անշէջ։

Մնաս բարեաւ իմ հայրենիք,
Ինձ կեանք արև պարգևող,
Մնաս բարև... վերջին անգամ,
Համբուրում եմ քո սուրբ հող։

ԳՈՒՐԳԷՆԻ ԸՆՄԸՀ ՑԻԾԱՏԵԿԻՆ

Գլգլալով ջուր է իջնում
Մշու մշուշ սարերէն.
Ծիծեռները ծիւ-ծիւ եկան
Գարնան գալը երգելէն։

Գարուն չկայ հայի համար,
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն.
Գերեզմանս հողին հաւսար,
Թող փուշ բուսնի իմ վրէն...

Գնա, ծիծեռ... թող ինձ մենակ՝
Վէրքը սրտիս՝ հողի տակ...

Բայց երբ տեսնես թշնամու դէմ
Հայ ժողովուրդ սարի պէս
Ձէնքը ձեռին հպարտ կանգնած,
Հայերը, լեռներ իրար պէս —

Ա՜խ, այն օրը արի, ծլա՛,
Գարնան գալը նոր կանչէ.—
Հայոց գարնան, որ բիւր բարև
Սիրտս խորէն զօրանջէ...

ՀԱՅ—ԳՈՒՍԱՆ

ԶԵՐՍԵՑՈՑ ԵՐԳ

Ես վերէն կուգայի՝ դու դուռը բացիր,
Ձեռքդ ծոցդ տարար՝ ախ էրիր լացիր,
Ես էլ քեզի չառայ՝ տունը մնացիր,
Գրնը, դապլի խային, եար չեղար ընձի։

Ես սարէն կուգայի, շալակս բուրդ էր,
Լեզուդ ընձի համար վառած քուքուրթ էր,
Բոյդ զարդու դամիշ, յերեսդ թուղթ էր,
Գրնը, դապլի խային, եար չեղար ընձի։

Երկինքը ամպեր էր, ինչ անուշ թոն էր,
Էկայ գրոնէն անցայ, ջանանս հոն էր.
Էրեցայ-վառեցայ, էս ինչդ տուն էր։
Գրնը, դապլի խային, եար չեղար ընձի։

Էսօր չարաթ էղնիր, էգուց կիրակի,
Եարրս գրոնէն անցնիր էրթար կրակի,
Լիզուն բանլիք էղնիր, ծուցը ֆռանկի։
Գրնը, դապլի խային, եար չեղար ինձի։

ՍԵՐՈԲԻ ՑԻՇԵՑՇԿԻՆ

Ոսկէ դագաթը բանձրիկ Նէմրութայ
Վառ-վառ կը շողայ մէջ Վանայ ծովուն,
Ազիզ անունդ, քաջ Սերոբ-փաշայ,
Ալմաստով փէլուն մէջ մեր սրտերուն.
Թող արարքներուդ արժանի գովքն էլ՝
Խղճուկ դուսանիս անզարդ երգերում
Ջինջ աղբիւրի պէս գլայ, գլգլայ...
Նէմրութայ սարը հազար ակն ունի՝
Հազարն էլ Մշու դաշտն ի վայր կերթայ.
Մենակ Սերոբի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մէջ կերթայ —
Ագատ օրերի, դալար օրերի
Ծարաւ ժողովրդի սրտի մէջ կերթայ։...

Նէմրութայ սարը քառասուն ժայռ ունի,
Քառասունի գլխուն մարմար քարափ կայ. —
Էն քարփի վրայ արծիւն է նստեր —
Ժայռերի արքան իր գահի վրայ —
Ու կռուցի մէջ մի սիրտ է բուներ,
Եւ զիլ կը կանչէ, չորս դին ձէն կուտայ
Սարերի արքան ամպերի վրայ...

—«Է՜յ, ականջ արէք հովերը ու հաւքերը,
Կարիճ Սերոբի սիրտն է կըտցիս մէջ,—
Է՜յ, ականջ արէք, սարերը ու ձորերը,
Սերոբ-փաշայի սիրտն է կըտցիս մէջ.
Սիրտը, որ ձեզնէն մեծ ու խորն էր։

Սերոբ-աղբիւրը ազատ Նեմրութից
Աղբիւրի նման վազեց լեռն ի վայր
Ու հեղեղ դառաւ, ահ ու մահ սփռեց,
Զարկեց ու ջարդեց հայու դուշմնին՝
Քուրդին ու թուրքին հարիւր ու հազար։

Ա՜խ, քուրդն ու թուրքը վախկոտ են, նամարդ,
Սիրտ չունին կայնել ճակատ առ ճակատ.
Փաշայ, փոտիշահ ազէս են, նամարդ,
Սիրտ չունին կռուիլ ճակատ առ ճակատ։

Եօթ տարի բոլոր ետևէդ ընկան,
Զաքդ տեսան, եօթը ծակ մտան.
Վերջն հազար դաւով, հազար խաղերով
Ընկար, քա՜ջ Սերոբ։ Ու երբ դուն ընկար
Ես եկայ, հասայ, սիրտդ հանեցի,
Որ գէշ դուշմնին փայ-բաժին չըլնի։

«Իգիթ սիրտը քաջ Սերոբի
Արևի պէս
Նէմրութ սարում լոյս կուտայ.
Ու քարերում, սև հողերում
Թէկուզ թաղեմ չի մարի,
Սուրբ վաթանի, ազգի սիրուն
Զուր յաւիտեան չի մարի։

Կարիճ սիրտը քաջ Սերոբի
Արևի պէս
Նէմրութ սարում բոց կուտայ.
Սարի սառուց, ձիւների մէջ
Թէկուզ թաղեմ՝ չի սառի,—
Ժողովրդի ազատ օրայ,
Գատուի սիրուն՝ չի սառի,
Զուր յաւիտեան չի սառի»...

Նեմրութայ սարն հազար ակն ունի,
Հազարն էլ Մըշու դաշտն ի վայր կերթայ.
Մենակ Աղբիւրի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մէջ կերթայ—
Ազատ օրերի, դալար օրերի
Ծարաւ վաթանի սրտի մէջ կերթայ...

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

Մ Շ Ա Կ

Ձլինքը արևառ, քրքտինքն երեսին, բեռը շալակած,
Ղաբիբ Մըշեցին մայդանի միջին կանգ առաւ յոգնած.

Կոշտացած ձեռքը երեսին տարաւ, քրքտինքը սրբեց,
Բայց, երբ որ աչքը չորս կուման դարձուց՝ ծանը ահ քաշեց։

Տեսաւ նա շրջեղ մեծ մեծ դարբասներ գոյնզգոյն ներկած
Պատշգամբի վրայ գօղալ Հայ կանայք շար՝ի շար նըստած,

Ղումաշ հովհարով մարմար թըշերին հով ու զով տալիս,
Փըրփուր շորերը թեթև քամիէն փըրփըռան գալիս։

Ջուխտակ արտասունք ջուհար ակի պէս աչքին ցոլացին.
«Մըշակ, չըլի թէ միտքդ բերիր քու կարօտած եարին»։

Մըշակը լուռ էր, նա ինձ չի տըւեց ոչինչ պատասխան,
Դարբասը թողած՝ աչքերը դարձուց նա դէպի մայդան.

Երկլուծ կառքի մէջ տեսաւ թեք ընկած մէկ նիհար տըղայ
Ձաշմակը աչքին, բերնին նարգիլէ՝ զինչ թուրքի աղա.

Մըշակի շրթին աննշմարելի մէկ ժըպիտ խաղաց,
«Մըշակ, այդ ինչ էր, որ սիրտդ խօսեց։ ծաղրը, թէ նախանձ».

Մըշակը ինձի պատասխան չի տուեց, ասես թէ լալ էր.
Բայց հոգերանը իսկոյն կ՝իմանար հոգին ինչ հալն էր։

Մայդանը թողած նա աչքը դարձուց լայն մեծ փողոցին,
Ոչոք չիմանալ թէ այն բոպէին ինչ խօսեց հոգին.

Գունդ գունդ գալիս էր ձիով ու հետի սպառազէն լաշքեաը
Առջևը առած հարուր ու հազար թըմբկահար, փողհար.

Ցընծալիր երգով զօրքը տօնում էր իր յաղթութիւնը.
Վայ քեզ, խեղճ Հայ, քանդել էր քո ազգի տունը...

Մըշակը լուռը մունջ մէկդի քաշուեցաւ, զողզոջուն ոտքով
Իր ճամբան գընաց՝ ծանրը տընքալով, կամաց երգելով։

ԴԱՄԱՌ—ԲԱԹԻՊԱ.

ԱՆՏԷՐ ԿՈՒԼԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Սև ամպերը Հայոց երկինք պատեցին.
Պայծառ արևն ու լուսին խաւարեցին,
Աստղերն ընկան երկնից, երկիր, չքացան,
Նստեր անտէր, արիւն կուլայ Հայաստան։

Կայծակ խփեց, այրեց սրբավայրերը,
Հայապատկան գեղատեսիլ դաշտերը,
Արծաթափայլ գետերն ամենն սևացան,
Նստեր անտէր արիւն կուլայ Հայաստան։

Ովկիանոսն ալ ալեկոծւած կատաղեց,
Կլանում է խղճուկ հային, ուր փախչի,
Ո՞չ յոյս մնաց, ոչ ապաստան, ոչ պաշտպան,
Նստեր անտէր արիւն կուլայ Հայաստան։

Էլ մենք ինչու արդեօք կասենք թէ հայ ենք,
Որ ամեն ժամ թշնամեաց դէմ չկուենք,
Պէտք է կուել կամ չքանայ հայութիւն,
Կամ ազատել գերութիւնից Հայաստան։

ԱՍԼՈՒ ՏՐՏՈՒՆՋԸ

Քանի՞ մէկ բորբոքւիմ, քանի՞ մէկ վառւիմ,
Մայրիկ, ուր է սրտիս մխիթարանքը.
Տա՛յ Աստուած, որ ես էլ մեռնիմ սպառւիմ,
Այսուհետև ինչու՞ է պէտք իմ կեանքը։

Երանի՞ էր ինձ չը ծընէիր, մայրիկ,
Զունենայիր ինձ պէս տարաբախտ աղջիկ,
Դուք էլ ինձ հետ եղաք խեղճ, ապերջանիկ,
Մաշեց, քանդեց մեզի դառն փորձանքը։

Ասլին եմ, չը փոխւաւ իմ օրս լաւի,
Կարմունջ դառայ ես հոգսերի ու ցաւի,
Եթէ Աստուած չը կամենայ, յիրաւի,
Չի կատարւի ոչ մի մարդու բաղձանքը։

Թարգ. Ջիւանի

ԼՈՒՌ ԳԻՇԵՐԻՆ

Լուռ գիշերին մտքիս դիմաց
Շատ ստվերներ ժողովան.—
Ընկերներս՝ մեռած, կորած,
Հոգուս խորքով անց կացան։

Նրանց աչքերն՝ բաց ու վրէժ
Սրտիս խորքը նայեցին.
Սիրտս բաց էր խոր վէրքի պէս,—
Նրանք այնտեղ սուզվեցին։

Անհաւասար, գոռ կռւի մէջ
Ընկաք, իմ վեհ ընկերներ.
Ա՜խ, ձեր շիրիմն իմ սրտումն է,
Իմ վեհ, իմ սուրբ ընկերներ...

ՀԱՅԿԱԶՈՒՄԱՆ

ՃԱՄԲԱՅ ՏՈՒԺՔ

Ճամբայ տրէք առաջ դամ,
Սիրած եարիս բարև տամ.
Ուխտ եմ արել. որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ։

Սարեր, ձորեր, յետ կացէք,
Իմ եարին ճամբայ բացէք.
Եար եարի հետ խօսելիս
Ականջ արէք, իմացէք։

Նըշի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի,
Երանեկ էն աղջըկան
Սիրած եարին թուշ կըլնի։

ՀՕՅ ՆԱԶԱՆ ԻՄ

Հո՜յ, նազան իմ, նազան իմ՝
Ջան, նազան իմ, նազան իմ.
Նազան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար.
Ծաղիկ քաղելով եկար,

Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հո՜յ, նազան իմ, նազան իմ,
Ինձ համար աղաւնիկ ես.
Ջան, նազան իմ, նազան իմ.
Գլխիս վերով պըտիտ տուր,
Հո՜յ, նազան իմ, նազան իմ.

Նախշուն-թև թիթեռնիկ ես։
Ջան, նազան իմ, նազան իմ։
Եար ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Ջաքար ծամելով եկար.
Քիշմիշ ուտելով եկար,

ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՕՐՀԱՍ

Գիտուն, թոզ գիրքը, ժամ չէ կարդալու,
Գեղջուկ, դու էլ լծոզ եզներն ու դուքան,
Տէր-հայը, դաղարէ մեռել թաղելու,—
Երկունքի մէջ է մայր մեր Հայաստան...

Երկունքի մէջ է Հայաստան աշխարհ,
Մեզ պիտի շնորհէ մի նոր գոյութիւն,
Փափագով սպասած ամենէս շատ դար—
Հայոց աշխարհի սուրբ ազատութիւն։

Մոռանանք պահ մի հին հաշիւները,
Թողնենք առօրեայ անձնական շահը,
Հանենք սըրտերէս մեր պիղծ կրքերը,
Հանենք սըրտերէս ըստրկի ոգը։

Քրիստոնեայ ենք մենք և սերունդ Հայկի,—
Այսքանը բաւ է։ Էլ լուսաւորչական,
Կամ պապադական և կամ լոթրանդի
Ազգը չի բաժնենք՝ 'ի սէր հայութեան։

Ծանրը երկունքի մէջ է Հայաստան,
Տանք թեթևութիւն նորա ցաւերին,
Նորա ծընելու դեղեցիկ մանկան
Թոյլ չըտանք խեղդել թըշնամիներին։

Նորածնի առջև բանանք մեր գանձը—
Հարուստը՝ ոսկի, ոյժը՝ պատանին,
Հարսը՝ իւր փեսան, քաջը՝ իւր անձը,
Կոնդակի շանթեր՝ սուրբ էջմիածին։

Աստուած մեզ խըղճաց վերջին այս նւագը,
Բացեց մեր պառաւ մօր ամուլ արգանդ
Թէ Հայը մարդ է՝ կաղատուի ազգը,
Թէ չէ—Հայաստան կը լինի քարքանդ։

ԴԱՄԱՌ—ԲԱԹԻՊԱՍ

ԼՑ ՋԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Է՜յ, ջան, հայրենիք, ինչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մէջ.
Ջրերդ՝ անուշ, հովերդ՝ անուշ,
Մենակ բալէքդ արիւն ծովի մէջ։

Քու հոգուն մեռնիմ, անգին հայրենիք,
Ա՜խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնիմ.
Երնէկ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ։

Ու հազար կեանքով քու դարդին մեռնիմ,
Բալէքիդ մատաղ, մատաղ քու սիրուն.
Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ,—
Էն էլ քու փառքի գովքը երգելուն։—

—Որ արտուտի պէս վեր ու վեր ճախրեմ
Նոր օրայ ծէգիդ, ազիզ հայրենիք,
Ու անուշ երգեմ, բարձր, զիլ գովեմ
Կանանչ արևդ, ազատ հայրենիք...

ՀԱՅ—ԳՈՒՍԱՆ

ՁԻՆԻՈՐԻ ԵՐԳ

Թռիր, իմ նժոյգ, սրլացիր շուտով,
Տար ինձ ցանկալի կռվի փոթորիկ,
Կռվի մէջ միայն ես արեան գնով,
Կը փրկեմ իմ խեղճ, ստրուկ հայրենիք։

Տար ինձ այն աշխարհ—անցեալում հզօր,
Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
Ուր, աւա՜ղ, դժբախտ եղբայրս այսօր,
Իւր կեանքն է ողրում՝ օտարին գերի...

Անցան շա՜տ դարեր, անցան շա՜տ տարիք,
Ազգիս շա՜տ ապրեց քաղցրիկ յոյսերով,
Բայց նորան երբէք չժպտաց երկինք,
Շրջեսաւ նա կեանք խաղաղ, անվրդով։

Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բախտին,
Երկա՜ր սպասեց նա կեանքի գարնան.
Բայց նորա առջև ոսոխ թշնամին
Իւր սրով փորեց կեանքի գերեզման...

Դէ՛հ, թռիր, նժոյգ, սրլացիր շուտով,
Տար ինձ ցանկալի մարտի փոթորիկ.
Մարտումն է զինուորն իւր արեան գնով
Ազգին պարգևում յաղթութեան դափնիք։

Ա. Ծատուրեան

ԽԱՆՈՒՄ ԷՎԱ ՋԱՆ

Բերդիցը դուրս ելայ Ալաղեազ տեսայ,
Խանում Էւա ջան.
Աբարան աչքերիս դուման ա դառել,
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով.
Լալով ողբալով, քեռչ ու բարխանով,
Խանում Էւա ջան։

Ոչխարն էսդին կարծայ, էնդին դառները,
Կանչեցեր ա ծաղիկները, ծառները.
Օրեր դարնան, անուշ օրեր
Ա՜խ, ուր էք կորել...

Սրի էրթանք քու ման գալած արտերը,
Խանում Էւա ջան
Քեզի տեսայ թաժացաւ իմ դարդերը,
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով.
Լալով ողբալով, քեռչ ու բարխանով
Սարեր ման գալով։

Ձեռ ու ոտս կապին, բերդը դրեցին,
Զուխայ շալվար լալով տունը բերեցին։
Օրեր դարնան, ազատ օրեր
Ա՜խ, ուրէք կորել...

Ես Ալիքն եմ Զամբլեցի մէկ ջիւան,
Խանում Էւա ջան.
Տուխսաղ էղայ ըստուց չուրի էրևան։
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով...

ԵՐԳՈՒՄՆ

Սուրբ օրօրանով զաւակիս կերդնում,
Կերդնում իմ ծնողաց ես դերեզմանով,
Ինձ կեանք պարգեւող արդանդով կերդնում
Եւ մրկրրտութեան սուրբ աւազանով։

Թող լինի վրկայ ինձ լեառն Արարատ,
Նոյեան տապանի ամուր պատանդան,
Եւ Արաքս գետի ջուրը անարատ,
Որով կ'ոռոգուի մայր մեր Հայաստան։

Թող լինին վրկայք իմ անսուտ երդման
Պարծանք հայութեան՝ ազգաշէն նախնիք—
Սուրբ Սահակ, Մեսրովբ, Ղեւոնդ, Քաջ-Վարդան,
Ողորմած Աշոտ, անընկիր Գագիկ...

Ազգիս սեղանի վրայ ես դրրի,
Իբրև ողջակէզ իմ այս սուրբ ուխտին—
Իմ ինչքը, կեանքը, վայելքն աշխարհի,
Աւելի քան զայն՝ քաղցը իմ ամուսին.....

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՊԱՆՏՈՒԽՏ ՄՇԵՑՈՒ ԵՐԳԸ

Եօթն օր, եօթ գիշեր
Զախկամնի գոտիս թոռմշեր,
Եար մզիկ դրռնէն դուս չելնայ
Փշուրմի սիրտ մրզիկ խովնայ—
Վայլէ, վայլէ, վայլէ, վայլէ...

Էրթամ Ստամբօլ,
Դատիմ փարայ բօլ,
Իմ եարի խամար
Առնիմ ջուխտ մի սօլ,
Արի, եար, արի,
Խռով մի կենայ,
Աստուրիս բան՝
Եար, մզիկ չի մնայ։

Վայ, սանխէր Կիվկիվ,
Դու գացիր ի Մուշ բարով,
Էլ չես յիդայ հազար տարով,
Խարս պարկե տղայ բերէ,
Առջընեկ լէ զուրթան կը վարէ—
Վայլէ, վայլէ, վայլէ, վայլէ։

Կայներ ես յիդին
Խաղող կու քաղես,
Զամամ ծծերով՝
Զաքար կու մաղես.
Ալմասա բիշախով՝
Զիմ սիրտ կու դաղես.
Արի, եար արի...

Երթանք Ջաջուռ գեղ,
Առնենք նուկիմ եղ,
Մըր եարի խամաբ,
Անենք ձաձեղ.
Արի եար արի, խռով մի մնայ,
Ատուորիս բան, եար, մղիկ չի մնայ։

ՄԱՐԱԼՕ-ՋԱՆ

Մարալո, ջան մարալո, մարալո.
Մարալո, սարի աղջիկ դարալո։

Մարալո, աղջիկ անունդ Զուշան.
Մարալո, մատնիքս տամ քեզ նշան։

Մարալո, արի գնանք Սուրբ-Նշան,
Մարալո, քեզ մինթանէն խըշխըշան։

Ջաղացս մանի, մանի,
Քունս անոյշ կըտանի.
Իմ եարս սարում՝ քոլում,
Իմ քունը ինչ կ՝տանի։

Ջաղացիս դուռը տաշած,
Աղլըխիս գիլը քաշած.
Կեռ կեռ ունքերիդ մեռնիմ,
Ոսկի դալամով քաշած։

Հանդէն գաս՝ գեղը մտնես,
Իմ քցած տեղը մտնես.
Ինձնից գիւման եար բռնես՝
Բիմուրվաթ հողը մտնես։

Մտիկ արէք էն ղըշին,
Ոտը ղրելա փըշին.
Գլուխս ղուրբան կ՚տամ,
Ձալ աչք, կարմիր թշին։

Դու նստել ես դոշակին,
Ուշ ու միտքդ փէշակին.
Խմել ես նռան գինին,
Հոտ քաշել մանուշակին։

Արևը կամար—կամար.
Կապել ես ոսկէ քամար.
Յիսուն օր պաս եմ պահել,
Իմ աղբօր. ճամբի համար։

Սարի խոտը ծեղէ ծեղ,
Ընկեր երթանք միատեղ.
Որ հարամին վըրայ տայ,
Գլուխս տամ գլխիդ տեղ։

Սարէն կ՚գայ ձիաւոր,
Մեր տունը չարդախաւոր.
Հրէս եկաւ իմ աղբեր,
Երեք օրւան թագաւոր։

Հաց եմ թխել, գարի ա,
Իմ եարը սաֆարի ա.
Սաֆար երթալուդ մեռնեմ,
Խօսքերդ շաքարի ա։

Խնձոր ունիմ կըծած ա.
Ձորեք կողմն էրծաթած ա.
Աղբերս ուզեց, տի ոչ,
Ազիզ եարի ղրկած ա։

Ջաղացս ման եմ տալ,
Սիրել եմ, ջան եմ տալ.
Օխտը տարի սէրութիւն,
Մէկ օր պայման եմ տալ։

Ա՛յ տղայ, դու բաղովն արի,
Ոտներդ շաղովն արի.
Էս թաղը ղալմաղալ ա,
Ման տուր, էն թաղովն արի։

Ծաղիկ եմ քաղել՝ ղեղին ա,
Իմ եարը ձեր գեղին ա.
Հէլ ու մեխակ շատ ունեմ,
Հըրէ եարիս ձեռին ա։

ՀԱԲԸՐԲԱՆ

Հաբրբան, ջանէ ջան
Սիրել եմ՝ սերն երեսին,
Անթառամ թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Ստրծու կրակն երեսին։

Հաբրբրբան, ջանէ ջան
Սարի թբրթընջուկ թաղա,
Մեղը ու շաքար քեզ մաղա,
Ինձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տրդին ոնց սազայ։

Ձեր տան տակին վար կանեմ,
Ձար քրդերին քար կանեմ.
Թող իմ սիրածն ինձի տան,
Գրժութիւնըս թարկ անեմ։

Աշուղի պէս խաղ ասա,
Բլբուլի պէս տաղ ասա.
Ինչքան որ գովես՝ աժեմ,
Իմ մօր գովական փեսայ։

ԷՍ ԳԻՇԵՐ ԼՈՒՍՆԵԱԿ ԳԻՇԵՐ

Էս գիշեր, լուսնեակ գիշեր,
Վա՜յ, լէ, լէ, լէ՛, լէ՛, լէ,
լէ, լէ՛, լէ՛, լէ, լէ՛.
Ձիւնն եկեր, գետին նախշեր,

Աչքըդ դէմ արա՝ պաշեմ,
Կեռ ունքեր, կարմիր թշեր։
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ,
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ։

Ա՜յ գիշեր, դարձի տարի,
Հացըս թող լինի գարի.
Մենակ եարըս ինձ համար
Սրբտով խօսքս կատարի։

Ա՛ղջի, քու չարը տանեմ,
Քու սիրուդ ինձ կը սպանեմ.
Դու իմ խօսքին ականջ դիր,
Ես մօրդ հաւան կանեմ։

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ճամբէս արիւնի հետք թողեը, կ'երթայ—
Արիւնոտ ճամբէս մեր թշնամու դէմ,
Խէթ-օձը առջեւս ընկեր ու կ'երթայ,
Եւ ագռաւները հետս ճամբորդ են։

Ձիս տխուր-տրտում կ'երթայ անգուման.
Ա՜խ, նա լաւ գիտէ, որ յետ չեմ դառնայ.
Դարդս թաղելու, ցրելու կ'երթամ
Դարդս-վրէժս, ու էլ յետ չեմ գայ։

Է՜հ, մնաք բարեւ, մեր դաշտ ու սարեր,
Ուր քոյլ ու քարերդ մեր արնով ներկեաւ.
Ինձ էլ չես տեսնի, իմ խեղճ, ազիզ մեր,
Ու զերեզմանս էլ չես գտնի բնաւ։

Կարմիր օրերի անգին ընկերներ,
Իմ տեղս պահէ՛ք, երբ գաք իրար քով.
Ա՜խ, եարիս ասէ՛ք, որ ես էլ չեմ գայ,
Որ լայ, վրէս լայ անուշ աչքերով։

ՇՈՂԵՐ ՋԱՆ

Ամպել ա, ձուն չի գալի, Շողեր ջան,
Սարիցը տուն չի գալի. Շողեր ջան.
Դուն օրօրա՛, դուն չօրօրա՛, Շողեր ջան,
Ամպի տակին ձուն կերևայ, Շողեր ջան։

Սիրտս կրակով լցուած, Շողեր ջան,
Աչքերիս քուն չի գալի, Շողեր ջան.
Դուն օրօրա՛, դուն չօրօրա՛, Շողեր ջան,
Ամպի տակին ձուն կերևայ, Շողեր ջան։

Հուրէ թափում վերիցը,
Ես վառայ քո սէրիցը.
Վարդավառին ինձ համար
Ձուն բեր դու սարերիցը։

Սարի գլխին ձուն եկաւ,
Ձէկլիկ եարս տուն եկաւ,
Դեռ մուրազիս չը հասած,
Վրէս խորունկ քուն եկաւ։

Աշունն եկաւ սարիցը,
Տերև թափեց ծառիցը.
Շողոն դարդով լցուել ա,—
Հեռացել ա եարիցը։

ԵԼԱԳԵԱՉ

Ալագեազ սարն ամպել ա,
Վա՛յ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ.
Աղբէրս իր ձին թամբել ա,
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան։

Աղբերս իր ձին թամբել ա,
Եարոջ դրռնէն անցել ա։

Եարոջ դրռնէն անցել ա,
Ելէ դաշտը՝ խաղցել ա։

Ելէ դաշտը՝ խաղցել ա,
Անձրև եկէ, թրջել ա։

Անձրև եկէ, թրջել ա,
Արև զարկէ՝ չորցել ա։

Արև զարկէ՝ չորցել ա,
Քան կարմիր վարդ բացել ա։

Մեր դռանը խընկի ծառ, Գիլրում ջան,
Ձեր դրռանը խնկի ծառ, Գիլրում ջան.

Խնձոր քաղեմ արի տար, Գիլրում ջան.
Իմ խորոտիկ, պրզտիկ եար, Գիլրում ջան։

Մեր դռանը խընկի ծառ,
Նալաշուն բըլբուլ վրէն թառ.
Երթար ու դար, չորոր տար,
Սիրուն եարին բարև տար։

Մեր դրռանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վրէն թառ.
Կարմիր խընձոր քաղել տար,
Ալան ծաղիկ տանել տար։

Ծ Ա Մ Թ Է Լ

—Իմ գլխու ֆաթէն կիտամ,
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողլորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն։

—Իմ գլխու չամբար կիտամ,
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողլորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն։

Եար ունիմ եար ունիմ
Եարիս եօթն ախպէր ունի.
Եար ունիմ, եար ունիմ,
Եօթ լէ գացած բանելու։

—Իմ վզի վգնոց կիտամ,
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողլորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն։

—Իմ սերսուփ ծամեր կիտամ,
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողվորի մէկ լէ ես եմ,
Չեմ խանա ծամթելն ի ծովէն։

Եար ունիմ, եար ունիմ,
Բաղչիս միջին վարդի ծառ.
Եար ունիմ, եար ունիմ,
Վարդը քաղեմ արի տար։

Ն Ի Է Բ Ը

Անուշաբոյը թարմ ծաղիկներ,
Հայ օրիորդն ինձ ընծայեց,
Հեռու երկրից անկեղծ նէբը
Իր քոյրերին ուղարկեց։

Ասաց՝—,,Տուր փունջն և ասա,
,,Թէ չի անցնիլ էլ երկար
,,Կռւի դաշտում հարս ու փեսա
,,Կը հանդիպենք մենք իրար՛՛։

Կռիւ կուտանք, կռիւ արդար
Կռիւ վերջին, ճգնական.
Գոտեպնդուած հերոսաբար
Եւ կազատենք Հայաստան։

Դուրս ցայտեցին արցունքներ տաք
Իմ աչքերից այդ պահին.
Լսում էի կարծես անյաղ
Ազատութեան պատգամին։

Եւ երդուեցի տանել փունջն այն
Դէպի կարմիր Հայաստան,
Ուր վիրաւոր հայերն համայն
Սպասում են փրկութեան։

ՁԱՐԽԻ-ՓԱԼԱՔ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՁԵԶ

Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ,
Որ կռուի դաշտում ընկաք անվեհեր
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք
Փշրել բռնութեան շղթան ու կապանք.
Բայց, աւաղ, ձեզ հետ մեռան ձեր իղձեր...
Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ։

Խաղաղութիւն ձեզ, հերոս եղբայրներ,
Թող չը վրդովեն ձեր սուրբ ոսկորներ.
Ձեր վերջին կամքը՝—«անէծք թշնամուն»—
Մենք միշտ կը պաշտենք որպէս սրբութիւն.
Անէծք ու վրէժ—դրա մեր միակ
Կը լինեն կեանքի հզօր նպատակ...
Քնեցէք խաղաղ, հերոս եղբայրներ,
Թող չը վրդովեն ձեր սուրբ ոսկորներ։

Ա. Ծատուրեան

ՄԵՐ ՄԱՅՐԵՐՈՒՆ

Աչերնիդ պղտոր, շորերնիդ կարմիր,
Խանձած մազերնիդ մրբրկին տաւած,
Որուն կ՚աղօթէք ցաւատանջ մայրեր,
Մինթէ դեռ կ՚ապրի հայու կոյր Աստուած...

Ալ վերջ աղօթքին, Խունկին ու Խաչին,
Սուրի, արիւնի այս որբ օրերուն,
Ձեր շրթները թող տարփանքով փակչին,
Աստուածանարգ Պողպատին փայլուն։

Աղաղակեցէք ձեր զաւակներուն
Թէ — „Աստուածն հայու մտաւ հողի զոդ
„Ահա ձեզ Կապար ու Պողպատ շողուն
„Մեռցնել-մեռնիլ, ալ մի ընէք հոգ՚՚։

Վ. ՏԱՐԱՆԴԻ

ՏՈ՛Ր ՁԵՌՔԴ ԸՆԿԵՐ...

Տուր ձեռքդ, ընկեր — այս ծանր օրերին
Թող գործի սիրով յուզին մեր սրտեր.
Նայիր — մեր առջև շատ նեղ է ուղին,
Մեր շուրջը — դժգոյն, սրտամաշ պատկեր...

Դեռ խոր թմրութիւն հայրենի երկրում,
Ազգը ծարաւի ուսման, գիտութեան.
Ազգային դեկը անշարժ ձեռքերում,
Եւ իշխող ոգին յետադիմութեան...

Վառ մտքի առաջ փակուած ասպարէզ,
Թղուկին պահած, և՛ գործ, և՛ դափնիք.
Օ՜, ընկեր, կարծես, մեր կեանքն է կըրկէս,
Ուր քաջ վխտում են խեղկատակ մարդիկ...

Տգէտը — գիտուն, անգործը — մշակ,
Ազգային հացով նա՛ է կշտանում՝
Ով հոգով աղքատ, երեսին դիմակ,
Հայրենի արտում որոմն է ցանում...

Ազգի գանձերին դեռ գողեր պաշտպան,
Լոյսին թշնամիք—մեզ լուսաւորիչ.
Ոչխարի վերայ գայլն է պահապան,
Կոյրը—առաջնորդ, համրը—քարոզիչ...

Տուր ձեռքդ, ընկեր, լարենք մեր ոյժեր,
Անդուլ գործի է մեր կեանքը կարօտ.
Առատ է հունձը, սակաւ մշակներ,
Դեռ խոր է նինջը, դեռ լոյսը աղօտ...

Ա. Ծատուրեան

ՄՇԵՑՈՑ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Երբ որ մայրը երկունքով
Աշխարհ բերէ երեխայ,
Հայրը որդուն մի սրրած
Պիտի դաշոյն տայ ընծայ։

Երբ երեխան մեծանայ,
Խաղալիքներու փոխան՝
Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահաբեր հրրացան։

Երբոր տղին վարժատուն
Գայ ժամանակ երթալու,
Նախ՝ սուր խաղցնել, և ապա
Պիտ սովրեցնունք կարդալու։

Կարդալ-գրրել լաւ բան է
Բայց որ հասաւ քննութիւն,
Աշակերտին հարցուցէք—
Վոթել գիտէ՞ նա արիւն։

Լոր դուք այսպէս յուսացէք
Փրրկել խրզճուկ Հայաստան.
Ազատ, անկախ մարդ երբէք
Լինելու չէ մուրացկան։

Ռ. Պատկանեան

ՄԱՏԱՂԸ—„ԹՈՒՄՕ"-ԻՑ

Յաղթանդամ լերան ձիւնոտ գագաթից
Դէպ կիսակործան մատուռը, կամաց՝
Ծանրը քայլերով, շնչարգել եղած՝
Իջնում է մէկը յոգնած ու քրտնած։

Նրա ջլապինդ ուսին վիթխարի,
Մի բան կայ կապած.—Արտօսի ժայռոտ
Լանջերում զարկած ոբս է ոչխարի,
Թէ ծերպաբնակ այծեամ վայրենի ...

Ցնքում է որսը. անզօր, ուժասպառ,
Մթնած աչքերը յառած երկընքին,
Եւ ազատութեան ոչ մի յոյս իսպառ
Չի ծագում երբէք իր թմրած մտքին։

Իջաւ ծանրաքայլ որսորդը—Թումոն,
Մըտաւ մատուռը, խաչ հանեց դէմքին,
Ապա կիսամեռ իւր որսը—Մամոն,
Երկիւղածութեամբ դրաւ Սեղանին։

Դէմքը կատաղի, դաշոյնը ձեռում,
Յառել է Թումոն աչքը Սեղանին,
Թնդում է սիրտը, արիւնը եռում,
Եւ բարկութիւնից դողում շրթունքնին։

«Իմ կթաններս քըշեցին, տարան,
Այրեցին տունս, կինս լկեցին,
Վերջին պատառս քրդերը կերան,
Որդուս գլուխը սրրով ջարդեցին...

Այժմ աղքատեմ, սրբազան սեղան,
Էլ ոչխար չունիմ, որ քեզ զոհ բերեմ.
Աղօթք չգիտեմ՝ բանամ իմ բերան,
Խունկ ու մոմ չկայ, չոքէ չոք վառեմ։

Բայց դրանց փոխարէն Աստուծի տակից
Քեզ զոհ եմ բերել, մի զոհ թանկագին,
Որից մինչ այստեղ ես իմ թիկունքից
Մի վայրկեան անգամ չեմ դրել գետին։

Ես նրան խլել եմ իր տաք անկողնից,
Որտեղ իմ կնոջս առած իւր գիրկը,
Պիղծ համբոյրներով՝ կուզէր նրրանից
Յագեցնել փութով վայրենի կիրքը։

Նա է, սուրբ մատուռ, Սեղանդ պղծողը,
Նա է որ անմեղ շատ արիւն թափեց,
Նա է իմ միակ որդուս մորթողը,
Նա՝ որ մեր հացով մեր արիւն լափեց։

Գուցէ մարդկային դու զոհ չես ուզում,
Գուցէ մարդկային հոսելն արեան
Շատ է ,,ողորմած'' քո սիրտը յուզում...
Ապա ուր էիր, ուր էիր սակայն,

Երբ մեր որդիքը կրակում ողջակէզ
Բառաչում էին նման ոչխարի.
Երբ նրանց կերկերուն ձայներն աղեկէզ՝
Թնդեցնում էին ծայրերն աշխարհի...

Չէ, իմ մտքերից ես չեմ նահանջում.
Պէտք է ընդունես, պէտք է զոհվի նա,
Վրէժս յաղուրդ է անշուշտ պահանջում.
Եւ այդ անպատճառ պէտք է ստանայ»։

Եւ յանկարծ ցոլաց ցոլքով կայծակի՝
Ահեղ դաշոյնը Թումոյի ձեռքում,
Արիւնածարաւ Մամոյի կրծքից,
Ցայտեց արիւնը վէրքից ահռելի։

Ու կարմիր ներկեց մատուռ ու Սեղան...
Ժպտում է Թումոն ժպտով սոսկալի.
Ապա յարձակուեց իւր որսի վրան,
Կուրծքը պատառեց գազանի նման։

Արնոտ ձեռներով դուրս խլեց սիրտը,
Շրջեց իրրև զարդ Սեղանի վրան,
Ապա դէպ երկինք մեկնեց իւր ձեռներ,
Ու չոքեց հանդարտ. նա աղօթում էր...

Ս.ՐՍԱՄՍԱՑԻՍ

ԱՆՁՐԵԻՆ ԵԿԱՒ

Անձրևն եկաւ շաղալէն
Ուռի տերև դողալէն
Վայ լէ, լէ, լէ,
Ջան լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ։

Հրէս էկաւ իմ ախպէր
Ալ ձին տակին խաղալէն
Վայ լէ, լէ...

Քանաքեռ բարձր տեղ ա,
Ջուրը հիւանդի դեղ ա,
Սիրած սիրածի չեն տայ.
Էս ինչ անօրէն գեղ ա։

Սիրել եմ սէրն երեսին
Ռէհան թերն երեսին
Ո՞վ իմ սիրածն ինձ չի տայ
Ասում կրակն երեսին։

ՀԵՐՈՍ, ԴՈՒ ԱՆՑԱՐ...

Հերոս, դու անցար քո կեանքի ուղին,
Այժմ քո փառքը կապրի աշխարհում.
Կապրի քո վսեմ, անձնուրաց ոգին
Սուրբ հայրենիքիդ հզօր երգերում.
Կապրի քո գործը—գործ հերոսական,
Որ ազատութիւն պարգևեց նրան։

Քանի որ ազգը չնչում է ազատ,
Կենդանի կմնաս դու նրա կրծքում.
Դու ընկար... բայց քո արիւնն անարատ
Կրհոսէ դարձեալ մեր երակներում.
Եւ քո գործերի փառահեղ դափնին
Միշտ ոյժ ու եռանդ կըտայ քո ազգին։

Կուի փոթորկում անունդ յիշելով,
Սարսափ կըձգենք թշնամու սրտում.
Հերոսիդ մահը կերգեն մեծ փառքով
Մեր մատաղ կոյսերն իրանց երգերում.
Եւ դու չես լսիլ երբէք լացի ձայն—
Լացը կանարգէր քո սուրբ գերեզման...

Ա. Ծատուրեան

ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է դարթելու,
Էրթամ ախոռ, գոմշուկները լրծեմ՝ գութան վարելու։
Դէհ, գոմշուկներ, ելէք, ելէք, արտը երթանք աշխատինք,
Հարկ ու խարջի վաղէն մօտ է, վօթենք արիւն ու քրտինք։

Հայի գութան, Հայի գութան, որի համար կը ջանաս,
Ո՞վ քեզիմով կրտանջրի, որին դու կուշտ հաց կուտաս։
Այն օր, երբ քեզ ձեռքիս առի՝ ազատ օրիս կորուցի,
Անվախ սիրտիս վրհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի։

Բաւ է, գութան, մեր տանջանքը, համբերութիւնն վերջ ունի.
Դուն տեսար, որ մեր դուշմանը ամօթ, խելք ու գութ չունի։
Արի փրշրեմ ես քու խոփը, տանք դարբինին կըռելու,
Կըռենք—կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կըռուելու։

Եղբայրք Հայեր, առէք խոփը, տէք դարբնին կըռելու,
Կըռել—կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու։

Ռ. Պատկանեան

ԳՆԱ ԵԱՐՕ ՋԱՆ

Ղարսայ բերդը փլել ա
Գնա, եարօ-ջան, գնա
Եարս տակին քնել ա
Գնա սալդաթ մի մնա։

Ձեր բաղի դուռը բաց ա
Գնա եարօ-ջան, գնա
Ոտներդ շաղով թաց ա
Գնա զինուոր, մի մնա։

Մեր տան յետև մի մառան
Տղերքն եկան յետ դառան
Ձեռս տարայ թէ բռնեմ
Դիփ լալ ու մարջան դառան։
Դէ, գնա, եարօ-ջան գնա
Գնա կուին մի մնա։

ԵՐԳԵՐԻ ՑԱՆԿԸ

	ԵՐԵՍ.
Յառաջաբանի փոխարէն	5
Ո՞վ է Հայդուկը	7
Քրիստափորին	11
Քրիստափորին	12
Մեր Աբշալոյսը	13
Խանասորի աբշաւանքը	14
Մի Վհատիր	16
Մենք անկեղծ զինուոր ենք	17
Դաշնակցական խումբ	18
Խարբերդ Կռունկ	19
Պեսոյի յիշատակին—Գարահիսար լերան կրծքին	22
Էն տրծիւ էր թռաւ գնաց	23
Մեր Հայրենիք	24
Մենք պէտք է կուենք	25
Տուր ձեռքդ եղբայր	26
Թող փչէ քամին	27
Կանգնիր, օվ անցորդ	28
Մենակի յիշատակին	29
Անդրանիկին—Իրրև Արծիւ	31
Հովերն առան	32
Մնաք բարով, արև, գարուն	33
Որսկան ախպէր	34
Արաղն եկաւ լափին տալով	35
Աղլուխս կորաւ ձեր դուռը	36
Նպատակիս զէթ մի մասը կատարուէր	37
Բաւ է, եղբայրք, վիրը ճկել	38
Հայդուկները Վանայ ծովի վրայ	39
Սիփանայ սարեր	43

ԵՐԵՍ.
Ինձ տեղ տէք, Սիփան սարեր . . . 44
Մի լար բլբուլ . . . 46
Սև-Քարեցի Սաքոյին . . . 47
Կանչէ, Կռունկ, կանչէ . . . 48
Ազատութեան Զանգ . . . 49
Անտառի ափին հպարտ անտասան . . . 50
Նոր կեանք . . . 52
Վերջալոյսին . . . 53
Առակ . . . 54
Օրօրոցի երգ . . . 56
Բոցիկու սարին սև ամպն է չոքեր . . . 59
Երազ . . . 60
Ազատն Աստուած . . . 61
Արաքսի արտասուքը . . . 63
Հին օրհնութիւն . . . 65
Բանտարկեալի բողոքը . . . 66
Եթէ կամիք փրկել թշուառ Հայրենիք . . . 67
Սերոբ Փաշի յիշատակին . . . 69
Խղճուկի ձէն . . . 70
Ողջ իմ որքան նկուն մնաս . . . 72
Դարդս լացէք . . . 73
Ա՜խ, տէք ինձ . . . 74
Օխտը սարով . . . 76
Տրամաբեան սաղմոսներից . . . 77
Վեհ ազատութեան . . . 78
Գուսան . . . 79
Խաղաղ դաշտի որդիք . . . 81
Ահա ծագեց կարմիր արև . . . 82
Հատիկ . . . 83
Գութանի երգը . . . 85
Զինուած պատրաստուած . . . 86
Ազատութեան հրաւէր . . . 88
Ես հանեցի սուրս պատեանից . . . 89

ԵՐԵՍ.
Աշուղ,—Յ. Յովհաննիսեանի . . . 90
Զանկի . . . 91
Աշուղ,—Գամառ-Քաթիպայի . . . 93
Ազիզ մէրիկ . . . 94
Պատմական . . . 95
Պանտուխտ առ կռունկ . . . 101
Տալորիկցի կորիճ . . . 102
Արաղին . . . 105
Թող կորնչեն տաճիկները . . . 107
Սերէմշեանի յիշատակին . . . 108
Սև ամպերէն . . . 110
Գէորգ Չաուշի երգը . . . 111
Նպատակիս հասնեմ միայն . . . 112
Ա՜խ, մեր սիրտը . . . 113
Մշեցու մօր աղաչանքը . . . 114
Զայն տուր ոմ ծովակ . . . 115
Բողոք . . . 116
Հայդուկի երգերից. Հաղար բարով հպարտ . . . 119
Արևն իջաւ սարի գլխուն . . . 120
Պարզիր աղբիւր . . . 121
Կարսոյի յաշատակին . . . 122
Քէօռ-օղլի . . . 123
Ղուրբաթ-ից . . . 125
Հերոսներին . . . 127
Վերջին բարև . . . 128
Գուրգէնի անմահ յիշատակին . . . 129
Ղարսեցոց երգ . . . 130
Սերոբի յիշատակին . . . 131
Մշակ . . . 134
Անտէր կուլայ Հայաստան . . . 136
Ասլու արտունջը . . . 137
Լուռ գիշերին . . . 138
Ճամբայ տէք . . . 139

ԵՐԵՍ-

Հոյ նազան իմ 140
Տաճկահայերի օրհաս 141
Է՜յ, Ջան հայրենիք 143
Զինուորի երգ 144
Խանում Էվա Ջան 145
Երդումն 146
Պանտուխտ Մշեցու երգը 147
Մարալ-Ջան 149
Հաբբբբան 152
Էս գիշեր լուսնակ գիշեր 153
Ճամբէս արիւնի հետք թողեր . . . 154
Ձողեր Ջան 155
Ալագեազ սարն ամպելա 156
Ծամթել 158
Նէրը 159
Խաղաղութիւն ձեզ 161
Մեր մայրերուն 162
Տուր ձեռքդ ընկեր 163
Մշեցոց նոր սերունդ—Երբ որ մայրը երկունքով . 164
Մատաղը — Թումօրց 165
Անձրևն էկաւ 169
Հերոս, դու անցար... 170
Գեղջուկի տաղը—Աղօթարանը բացուեցաւ . . 171
Գնա հարս Ջան 172

594. 0-0- hp

Н Арм. 3-27

Գրքի գլխաւոր պահեստը գտնւում է բացառապէս Երևանում

Պ. Պ. ՍԱՐԳԻՍ ՕՀԱՆՋԱՆԵԱՆԻ և Պ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

գրավաճառանոցներում։

100-ից ոչ պակաս գնողներին 25 % զեղչ։

Ուղարկում ենք նաև վերադիր վճարով։

Ճանապարհածախքը գնողների վրա է։

Յանկացողները պէտք է դիմեն՝

Эривань, Книжный Магазинъ

САРКИСА ОГАНДЖАНЯНА կամ՝ П ОВАНЕСЯНЦА.

«Ազգային գրադարան»
NL0389569

72.786